

Նարինե Վ. Մարգարյան
պատմական գիտությունների թեկնածու

ՋԲԵՅԼԻ ՈՐԲԱՆՈՑԻ ԱՇԿԵՐՏԱԿԱՆ «ՏՈՒՆ» ԱՄՍԱԳԻՐԸ, ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՄԱՆ ՓՈՐՁ¹

*Բանալի բառեր*¹ Հայոց ցեղասպանություն, որբեր, ազգային ինքնագիտակցություն, Ջբեյլի որբանոց, աշակերտական ամսագիր, որբանոցային մամուլ, կրթություն, ազգային վերակերտում:

Հոդվածում ուսումնասիրվել ու վերլուծվել են Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կազմակերպության Ջբեյլի (Լիբանան) որբանոցի «Տուն» աշակերտական խմորատիպ ձեռագիր ամսագրի շուրջ երեք տարվա համարները: Խնդիր է դրվել պարզել որբերի՝ երբեմն խիստ զգայական, հուզական, հայրենասիրական, շատ հաճախ նաև սթափ ու իրատեսական հիմքերի վրա գրված հոդվածները, կյուբերը, դրանց համադրման և վերլուծության արդյունքում պատկերացում կազմել որբանոցում գործող ազգային մթնոլորտի, երեխաների զգացողությունների ու ցեղասպանության հետևանքները հաղթահարելու ուղղությամբ կատարված քայլերի վերաբերյալ: Ամփոփելով ամսագրի 34 համարների հոդվածների բովանդակությունը՝ կարելի է եզրակացնել, որ որբանոցային ամսագիրն իր հարուստ ազգային, գրական-գեղարվեստական հոդվածներով, հայրենի բնակավայրի ու Հայոց ցեղասպանության տարիների իրենց վկայություններով 13-16 տարեկան որբերի համար ունեն յուրահատուկ խորություն: Ջբեյլի որբանոցային սերունդը տարբեր ձևերով ազգային վերակերտման փորձեր է արել, որոնք նպաստել են Ցեղասպանության տրավմայի հաղթահարմանը: Դրանցից կարելի է նշել ապրիլի 24-ի նահատակների ոգեկոչման արարողությունները, ազգային արժեքների, հայոց լեզվի, գրականության և բանահյուսության մասին հոդվածների ձևով ներկայացնելը, ստեղծագործելու, ընթերցելու, ասմունքելու միջոցով կրտսեր սերնդակիցներին հայկական հոգևոր արժեքների մասին տեղեկացնելը:

Հայոց ցեղասպանության տարիներին որբաշխարհի առջև ծառայած խնդիրները բարդ էին, դժվար էր լուծել վերապրելու, սովը հաղթահարելու, համաճարակներից փրկվելու հարցերը, ինչպես նաև ծնողերի կորստին ականատես լինելուց հետո վերապրումները հաղթահարելու և կյանքը շարունակելու խնդիրը: Միջագետքի անսպաստներից, մուսուլմանաբնակ վայրերից իրականացվող որբահավաք աշխատանքների արդյունքում բազմահազար որբեր ապաստան էին գտնում հայկական և օտարերկրյա տարբեր որբանոցներում: Վերջիններս իրենց գործունեության բնույթով տարբեր էին՝ մաքուր հայկականից մինչև խիստ օտարամուլ, իսկ մինչև 1918 թ. Մուդրոսի զինադադարը գործում էին նաև թուրքական որբանոցներ:

1 Հոդվածը ստացվել է 12.10.2020 և ընդունվել է տպագրության՝ 30.10.2020:

Որք երեխաների տեղաշարժերն անկանոն էին, մի որբանոցից տեղափոխվում էին մյուսը, հաճախ որբանոցները ֆինանսական սղության, համաճարակների առկայության և այլ պատճառներով փակվում էին ու այդ ընթացքում իրավիճակին հազիվ համակերպված որբերը ստիպված էին հերթական դժվարություններն ու բարդությունները հաղթահարել: Այս ընթացքում գործել են որբանոցներ, որտեղ մթնոլորտն իսկապես հանգիստ է եղել, ինչը հնարավորություն է տվել որբերին պահպանել հայկական ինքնությունն ու չմոռանալ մայրենի լեզուն:

Ահա այդպիսի որբանոցներից էր Ջբելյի² որբանոցը, որն իր գործունեությունը սկսել է 1920 թվականից: Այն Մերձավոր Արևելքի նպաստամատուց կազմակերպության³ որբանոցային ցանցում գործող որբանոցներից մեկն էր: Նշենք, որ ցեղասպանության տարիներին այս կազմակերպությունը ստանձնել էր Սիրիայում, Լիբանանում և պաաստան գտած մոտ տասը հազար որբերի խնամքը⁴:

Ջբելյի որբանոցի առանձնահատկություններից է եղել այն հանգամանքը, որ որբանոցում կարողացել են ստեղծել մի կորիզ, որը կյանք է տվել աշակերտական-որբանոցային ամսագրին: «Տուն» ամսագիրը Յեղասպանության տարիների արհավիրքներին ականատես որբերի ինքնագիտակցության, կյանքը վերարժևորելու և դժվարությունները հաղթահարելու, վրեժխնդրության, կորուսյալ հայրենքի ու պայքարի, և մի շարք այլ արժեքների ու գաղափարների արտահայտությունն էր:

Որբանոցային ամսագիրն իր հարուստ բովանդակությամբ հնարավորություն է տալիս համախմբելու Հայոց ցեղասպանությունը վերապրած որբերի կամ *որբանոցային սերնդի* առաջին տպավորություններն ու պատկերացումները, որը պիտի իր ազդեցությունն ունենար հաջորդ սերունդների վրա:

Ջբելյի որբանոցի պատմությունից

Ինչպես նշվեց, Ջբելյի որբանոցը Մերձավոր Արևելքի նպաստամատուցի հոգածության տակ գտնվող որբանոցներից մեկն էր, երբ կազմակերպությունը հետպատերազմական ընթացքում իր ուժերը կենտրոնացրել էր վերապրած որբերի խնամքի վրա: Որբանոցը բացվել է 1920 թ. հոկտեմբերին՝ 1.200 որբերով՝ Ռեյ Թրևիսի

2 Ջբելյը գտնվում է Միջերկրական ծովի ափին, Բեյրութից 40 կմ հեռավորության վրա: Հնագույն քաղաքն ունի մոտ յոթ հազար տարվա պատմություն: Ջբելյ անունը սեմական արմատներով բառ է, որը նշանակում է «Փոքր լեռ», իսկ Բիբլոսը՝ վերջինիս հունահռոմեական անվանումն է: Մանրամասն տե՛ս *Յուշամատենն Շիպեյի ամերիկեան որբանոցի 1920-1925* (Պեյրութ, Համազգային, հրատարակությունն նախկին սաներու, 1969), 19-27:

3 Կազմակերպության գործունեության մասին մանրամասն տե՛ս James L. Barton, *Story of Near East Relief (1915-1930)* (New York: The Macmillan Company, 1930); Սուրեն Ավետիսյան, *Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատուց կոմիտեի (Ամերկոմի) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ.* (Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2009); Այսա Դարբինյան, «Մերձավոր Արևելքի նպաստամատուց կոմիտեի մարդասիրական քարոզչական քաղաքականության առանձնահատկությունները (1915-1930 թթ.)», *Պատմաբանասիրական հանդես 2* (2011), 47-59:

4 «Հայ որբեր. տեղեկագիր հայ որբերու կացութեան, որբանոցներու, հոգատար մարմիններու մասին եւ վիճակագրական ցուցակներ» ձեռագիր տեղեկագիր (Փարիզ, 1923):

ղեկավարությամբ⁵: Որբերի հիմնական մասն այստեղ են տեղափոխվել Այնթափի որբանոցից, այնուհետև որբանոցը համալրվել է Սիրիայի և Թուրքիայի տարբեր շրջաններից եկող որբերով: 1923 թ. Նահր Իբրահիմի որբանոցի (որտեղ ապաստանել էին հիմնականում Կոնիայի և Կեսարիայի որբերը) սաները, համաճարակի պատճառով փակվելուց հետո, նույնպես տեղափոխվել են Ջբելյ: Որբերի առավելագույն թիվը հասել է 1.500-ի, որից 400-ը՝ մանկապարտեզում, 150-200՝ արհեստանոցում, մնացած 900-ը նախակրթարանում և բարձրագույն բաժիններում⁶: Որբանոցում ապաստան են գտել 4-16 տարեկան տղա որբեր:

Որբանոցի ուսումնական կյանքը բավականին ակտիվ է եղել, բարձրագույն դասարաններն ավելի քիչ էին՝ մեկ կամ երկու: Ինչպես այդ ժամանակի շատ այլ որբանոցներ, Ջբելյի որբանոցը նույնպես ունեցել է սեփական արհեստանոցները, որտեղ որբերը կարողացել են արհեստներ սովորել՝ զուգահեռաբար որբանոցի կարիքները հոգալով:

Ջբելյի որբանոցի մասին մանրամասն տեղեկություններ են ամփոփված որբանոցի սաների կողմից հավաքված ու խմբագրված «Յուշամատեան»-ում, որտեղ մի քանի բաժիններով ներկայացված է որբանոցի գործունեությունը: Այն հրապարակվել է որբանոցի փակվելուց 40 տարի անց, և խմբագրական խորհրդի անդամները հետամուտ են եղել, որ հրատարակվեն առավել ամբողջական նյութեր, փաստաթղթեր, հուշագրություններ, սակայն հավաքչական աշխատանքների ու թղթակցությունների արդյունքում պարզել են, որ որբանոցի «վերոյիշեալ արիխները փճացուած էին որբանոցի փակումին յաջորդող ամիսներուն»⁷:

Ցեղասպանության տարիներին և դրանից հետո որբանոցային սերունդը սկիզբ է դրել մի յուրահատուկ երևույթի՝ այն է որբանոցային մամուլը⁸: Պետք է նշել, որ Ջբելյի որբանոցի «Տուն» ձեռագիր խմորատիպ ամսագիրը եզակի երևույթ չէր: Այն բնորոշ էր ավելի երկար գործող, ավելի կազմակերպված որբանոցներին, բայց պետք է փաստել, որ որևէ պարբերական հրատարակելու գաղափարն իրականություն դարձնելու համար կարևոր էր որբանոցում տիրող մթնոլորտը: Խմորատիպ թերթեր ունեցել են Հալեպի հայկական որբանոցը, որի մասին միայն որոշ հիշատակումներ կան, Այնթափի որբանոցն ունեցել է «Այգ» անունով թերթ, որի մասին հիշատակվում է Եգիպտոսի Որբախնամի տեղեկագիր-ակնարկում⁹: 1918-1919 թթ. Թիֆլիսում տպագրվել է

5 Ռեյ Թրևիսը սկզբնական շրջանում եղել է Այնթափի որբանոցում, ապա, երեխաների հետ անցնելով Քիլիսով ու Հալեպով, կարճ ժամանակահատված կայանել է Բեյրութի Կարանթինս վայրում, որից հետո հաստատվել է Ջբելյում:

6 *Յուշամատեան*, 55:

7 Նույն տեղում, 10:

8 Նշենք, որ հայ մամուլի ավելի քան երկդարյա պատմության շրջափուլերում Հայաստանում և աշխարհի տարբեր երկրներում հրատարակվել են շուրջ երեքուկես հազար պարբերականներ, որոնք իրենց ավանդն են ունեցել հայ ժողովրդի հասարակական, քաղաքական մտքի, լուսավորության, գիտելիքների տարածման, մշակույթի զարգացման, աշխարհայացքի ձևավորման և մի շարք այլ ոլորտներում: Որբանոցներում ապաստան գտած երեխաները, թերևս մամուլի դերի կարևորության գիտակցումով, փաստորեն յուրովի շարունակել են հայ տպագրության ավանդույթները:

9 Հայ որբախնամ ընկերության Այնթափի որբանոց, *Ակնարկ մը հաստատութեան պարագաներուն*

«Փարոս»-ը, որը եղել է Ամերիկյան կոմիտեի որբանոցների որբ աշակերտական միության օրգանը: 1925-1928 թթ. Բեյրութում տպագրվել է «Որբաշխարհի աստղ» հանդեսը, որը Մերձավոր Արևելքի նպաստամատուց կազմակերպության որբերի դաշնակցության համատեղ թերթն էր: 1919-1921 թթ. Ալեքսանդրիայում Հայ որբախնամ կազմակերպության նախաձեռնությամբ սկսել է լույս տեսնել «Որբունի» տեղեկագիրը, որը մի փոքր այլ ուղղվածություն ուներ. այն որբերի կողմից չէր հրատարակվում, բայց իր էջերում անդրադառնում էր կազմակերպության կողմից որբերի փրկության, անապատներից հավաքագրման, նրանց ապաստան տալու, որդեգրելու համար և, առհասարակ, փրկության տարբեր նախաձեռնությունների լուսաբանմանը, հանգանակությունների, վիճակահանությունների կազմակերպմանը:

Որբանոցային մամուլը՝ որպես հետցեղասպանական երևույթ, բավականաչափ հետաքրքրական է, սակայն սույն հոդվածում մենք նպատակ ենք դրել ուսումնասիրել բացառապես Ջրելի որբանոցի «Տուն» ամսագիրը: Վերջինիս 34 համարները՝ ընդհանուր մոտ 850 էջի սահմաններում, բավականաչափ ծավալուն են ու հարուստ հուշագրությունների, որբանոցային կյանքի, ընդհանրապես գրականագիտության տեսանկյունից: Այն արտացոլում է որբանոցի առօրյան, որբերի ստացած տեղեկություններն իրենց հայրենիքի, որբանոցում հայտնվելու պատճառների և, առհասարակ, հայ լինելու և իրենց նախնիների պատմության և թողած ժառանգության վերաբերյալ¹⁰:

Նշենք, որ «Տուն» ամսագիրը բովանդակային տեսանկյունից մինչ այժմ չի ուսումնասիրվել, թեև «Յուշամատենան Ճիպեյլի ամերիկեան որբանոցի 1920-1925» ժողովածուում անդրադարձ կատարվել է ամսագրին, ներկայացվել է ամսագրի էջերից հակիրճ ծաղկաբաղ¹¹:

«Տուն» ամսագրի ստեղծման պատմությունից

Որբանոցը, մինչև «Տուն» ամսագրի հրատարակվելը, ունեցել է «Հոսանք» անունը կրող խմորատիպ թերթ, որի ստեղծման նախաձեռնությունը եղել է որբանոցի ավարտական դասարանների աշակերտների: Սկզբնական ժամանակահատվածում նախատեսվել էր հրատարակել ամիսը երկու անգամ, որբերը պատասխանատվություն են ստանձնել և դարձել իրենց իսկ ամսագրի խմբագիրները, սրբագրիչները և կազմարարները: Ամսագրի տպագրման աշխատանքները կատարվել են որբանոցի ուսուցիչ Ստեփան Տարտունու հսկողությամբ, որը ոչ անմիջական, բայց իր խորհուրդներով, որպես ավագ դասարանի պատասխանատու մասնակցել է ամսագրի ստեղծման աշխատանքներին: Այդ մասին «Յուշամատենան»-ում նշվում է. «...աչքի պիտի զարներ ինքնայատուկ գիծ մը, կարմիր թելի նման, տարօրէն հայեցի եւ մոլեռանդօրէն ազգայնական, ուր տեղ

և քառամնայ պատմութեան վրայ (1919 օգոստոսէ 1923 յունիս) (Աղեքսանդրիա, Ս. Գասպարեան, 1923), 21:

10 Ամսագրի ամբողջական թվային տարբերակը մեզ է տրամադրել ՀՅԹԻ հիմնադրամի Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի վարիչ, աղբյուրագետ Միհրան Մինասեանը, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում նրան:

11 «Փունջ մը «Տուն»էն», *Յուշամատենան*, 167-194:

գտած յօդուածներու բովանդակութենէն, ձեռն, լեզուէն, ոճէն աւելի՝ ըսել ուզածն էր կարելորդ»¹²:

«Հոսանք» թերթի բովանդակային ուղղվածության առնչությամբ որոշակի ճնշումներ են եղել որբերի վրա, անգամ՝ հեռացման դեպքեր: Այդ մասին «Յուշամատեն»-ում կարդում ենք. «Առաջին յեղափոխության ակիքը քիչ-քիչ կնստեր, աստիճանաբար որբանոցը իր հանդարտ մթնոլորտը կը վերագտներ: Իր կարգին կը փոխուէր նաեւ վերէն եկող նեղմիտ, անհարազարտ կրօնական քարոզչութեան շունչը, ազգայնական տրամադրութիւններուն դէմ ճակատ յարդարելու ձգտող ժամանակավրէպ շարժումը»¹³: Որոշ ժամանակ անց հասունանում է նոր ամսագիր լույս ընծայելու գաղափարը, որն արդէն կոչվում է «Տուն»:

Որբանոցի սան, ամսագրի բազմաթիվ հողվածների հեղինակ Հովհաննես Մեղրունին հիշում է, որ մոտավորապէս չորս տարի առաջ, իրենք որբանոցի մի քանի ընկերներով որոշել են թերթ հրատարակել և անգամ անուն են որոշել՝ «Հոսանք», որը խմորատիպ թերթի կարգավիճակով ամիսը երկու անգամ պիտի լույս տեսներ: «Կարճ եղաւ «Հոսանք»-ին կեանքը, ան կարգ մը անհաճոյ դեպքերու պատճառով գոյութենէն դադ-րեցաւ, բայց այն եղաւ հիմնաքարը ներկայ Տուն-ին»¹⁴:

Մեղրունին հիշում էր, որ մի կիրակի հավաքված են եղել, երբ ուսուցիչներից մեկն ամսագիր ստեղծելու գաղափարն է տվել, անգամ անուն է առաջարկել՝ «Տուն»: Ու այս անունով ամսաթերթը «իր կոչումին համաձայն, ճշմարիտ տուն մը եղաւ, տուն մը, որուն մեջ որբանոցի գրողները (եթէ կարելի է այսպէս անուանել) շուտով ապաստան գտան»¹⁵: Ամսագրի տպագրության ընթացքում իր շուրջը հավաքել է գրականության նախասնձախնդիրների մի խումբ: Մեղրունին նշում է նաև, որ թերթի աշխատող թիմն ուժեղացավ հատկապէս Նահր Իբրահիմի որբերի¹⁶ Ջրելլ տեղափոխվելուց հետո, և ակնհայտ է, որ նյութերն ավելի հարստացան ու ուսուցիչներն էլ սկսեցին լուրջ աշխատանքներ տանել¹⁷:

Ամսաթերթի առաջին համարը լույս է տեսել 1922 թ. սեպտեմբերին, ունեցել է կանոնավոր հրատարակություն, չնայած որոշ համարներ միասին են տպագրվել: Այն տպագրվել է մոտ 40-50 օրինակներով: Խմորատիպ ամսագիրն ունեցել է նաև անգլերեն, ավելի քիչ՝ ֆրանսերեն հողվածներ, երբեմն հանդիպում ենք օտար հեղինակների հայտնի գործերից թարգմանություններ: Ամսագրի առաջին 12 համարները 20-ական էջ են, №13-14, №15-16, №17-18 համատեղ համարները՝ 32 էջ, №19 և №20՝ 36 էջ, №21 և №22՝ 60, №23՝ 72 էջ, №24՝ 52 էջ, №25՝ 60 էջ, №26-27-28՝ 64 էջ, №29-33՝ 40 էջ, №34՝ 32 էջ: Ամսագրի էջերում ներառվել են շուրջ 60 հայտնի քաղաքական

12 *Յուշամատեն*, 78:

13 Նույն տեղում, 79:

14 Յովհաննէս Մեղրունի, ««Հոսանք»էն, Տուն», *Տուն*, սեպտեմբեր 1924, թիվ 25, 12-13:

15 Նույն տեղում:


16 1923 թ. մալարիայի տարածման պատճառով Նահր Իբրահիմի որբանոցի սաները տեղափոխվել են Ջրելլի որբանոց:

17 Յովհաննէս Մեղրունի, ««Հոսանք»էն, Տուն», *Տուն*, սեպտեմբեր 1924, թիվ 25, 12-13:

ու գրական գործիչների դիմանկարներ, ինչպես նաև բազմաթիվ նկարազարդումներ: Գլխավոր գծանկարիչն է եղել Հարություն Ղազարյանը, նրան օգնել են նաև Ռ. Ղուկասյանը, Գ. Գիրգորյանը և Գ. Խաչերեսյանը:

Ամսագիրն ունեցել է նաև օգտակար խորհուրդների բաժին, թևավոր խոսքերի, գվարճալիքների կամ մանրապատումների բաժին, որոնք հիմնականում իրական, որբանոցային դեպքեր են եղել: Առաջին համարներում տեղ են գտել նաև բնագիտական հոդվածներ՝ բնության մեջ կատարվող երևույթների, դրանց առաջացման պատճառների ու հետևանքների մասին:

Սկզբնական շրջանում ամսագրի խմբագրության աշխատանքներն ուղղորդել են հայերենի ուսուցիչներ Կոստան Պանտիկյանը, ավելի ուշ՝ Հայկ Պալյանը, սակայն հիմնական պատասխանատուները եղել են երեխաները:




«Տուն» ամսագրի առաջին էջերից

«Տուն» ամսագիրը՝ իր «Տոն, տոն, քաղցրիկ տուն» կարգախոսին համաձայն փորձել է իր էջերում որբերի համար ընտանեկան մթնոլորտ սպահովել: Ամսագրի տարբեր համարներում ակնհայտորեն նկատվում է գաղափարական տունը ստեղծելու աշակերտների ջանքերը: Ավելի ուշ տպագրվում են տարբեր թեմաներով բանաստեղծություններ:

Ամսագրի առաջին համարում խոսվում է *Snu*՝ որպես որբանոց հավաքական գաղափարի մասին, որտեղ բոլորը հավաքվել են որոշակի հանգամանքներից ելնելով և հեղինակը՝ Զաքար Տարագճյանը գրում է. «Տուն կը կոչենք այն վայրը

ուր հաւաքականութիւն մը ընտանիք մը ապաստանած է ... իբր մարդ անհատներու հաւաքականութիւն մը որ ունի իր յատուկ կենցաղն ու ապրելակերպը»¹⁸: Ընտանիքի գաղափարների մասին խոսելիս հեղինակն ընդգծում է, որ *տունը* բնակավայր է և պետք է փորձել ներթափանցել նրա գաղափարական մթնոլորտից ներս, որի իսկական գոյության համար անհրաժեշտ է սեր, փոխադարձ հարգանք, անձնվիրություն, որն էլ բերում է ընտանեկան ներդաշնակության: Հեղինակը նշում է. «Ազգի մը քաղաքակրթութեան չափանիշը իր դպրոցներն են ... բայց նկատելով թէ՛ մանուկի մը համար իր պատկանած ընտանիքը ամէնէ առաջին և նախնական դպրոցն է, հոս է որ կը փնտրենք ազգի մը մեծութեան իսկական հիմերը»¹⁹: Հողվածի վերջում եզրակացնում է. «...տունը այն միջավայրն է, ուր մարդ անհատը կը վարժուի ընկերական փոխադարձ պարտականութիւններու և իրավունքներու, այն տեղն է, որ մարդու մէջ կը մշակուի գործակցութեան և գոհունակութեան ոգին»²⁰:



Գծանկար. ամսագրի տպագրության աշխատանքներ

1922-1923 թթ. իրենց գործունեության հաջող ընթացքի համար նրանք առանձնացնում են իրենց աշխատակիցներին՝ խմբագիրներ, գծանկարիչներ, տպագրիչներ՝ ընդհանուր 64 հոգի, որոնք աշխատել են այդ ընթացքում: Ցուցակին հաջորդում է «Մտքի աշխատանք» նյութը, որտեղ կարդում ենք. «Խտրի՛, կարդա՛, գրի՛, պատմի՛, դատի՛, գլուխդ ուղցնո՛ւր. «մտքի աշխատանք» անուն տուած են ասոնց: Դ-ու պիտի ցուցանես, թէ որքան խորհիլ գիտես, այսինքն թէ որքան մարդ ես: Դ-ու պիտի ցուցանես, թէ որքան ազնիւ են քու գաղափարները, որքան բարձր են քու դատողութիւնները, որքան ճիշտ:

18 Չաքար Տարագճեան, «Տունը», *Տուն*, սեպտեմբեր 1922, թիվ 1, 2:

19 Նույն տեղում, 3:

20 Նույն տեղում, 3-4:

Այդ ուղղությամբ օրէ օր դու աւելի պիտի մարգուիս և Տուն ամսագիրը առիթ մըն է քեզ համար: Նայի՛ր, տարուան մը մէջ վաթսուն հոգիի պատկանելի խումբ մը ինչ աշխատանք կատարած է հոն: Հետևի՛նք այդ խումբին»²¹:

Ուսուցիչ Հայկ Պալյանը ոգևորում ու կոչ էր անում աշակերտներին գրել՝ բացահայտելով իրենց մտքերը, որբերի հոգու՝ հայոց լեզվի ու հայրենիքի նկատմամբ ծարավը հագեցնելու համար: Նա ջանք չէր խնայում հայերենի դասերը հետաքրքիր անցկացնելու համար՝ իր ազատ ժամերը տրամադրելով «Տուն» ամսագրի վերահսկողության և կանոնավոր հրատարակության համար²²: Նրա նախաձեռնությամբ արտադասարանական մրցումներ էին իրականացվում, թատերական ներկայացումներ պատրաստվում: Նա մեծ դեր ուներ «Տուն»-ի բովանդակությունը հարստացնելու և ծավալներն ընդլայնելու գործում: Հետագայում Պալյանն իր ընկերոջ՝ Կարպիս Լազարյանի հետ նույնպես հեռացվել է որբանոցից, որոնց նախորդել էր նաև Ստեփան Տարտունին՝ «խռովարար և յեղափոխութիւն սերմանող» հիմնավորմամբ:

Որբանոցի ուսուցչական անձնակազմի մեծ մասն անցել էր ցեղասպանության արհավիրքների միջով, ունեցել կորուստներ, նրանց թվում կային Հայկական լեզգեոնի մասնակիցեր, ովքեր Կիլիկիայի հայաթափումից հետո հիմնականում զբաղվում էին երեխաների հետ և իրենց ազատ ժամանակն անցկացնում էին որբանոցում: Նշենք, որ որբանոցի շինությունների հիմնական մասը կառուցել ու երբեմն վերանորոգել են ուսուցիչներն ու երեխաները:


Որբերը հիշում են, թե ինչ ճանապարհ են անցել, մինչև հասել են Ջրելյ: Դեռևս 1919 թ. ապրիլ ամսին Հալեպում վրաններից բաղկացած հաստատությունում, որտեղ բոլորը խոսում էին տարբեր լեզուներով, տարբեր գավառաբարբառներով, վաղուց գրկված ծնողական խնամքից, իրար անծանոթ, գիտակցել են, որ բոլորը եղբայրներ են, միմյանց արյունակից ու հայրենակից: Ուրախ էին, որ թափառական կյանքը վերջ պիտի գտներ²³: Չնայած նրանց Ջրելյում տեղավորել էին հին մետաքսի գործարանում, բայց իրենք ոգևորված էին, քանի որ տան մեջ էին, իրենց համար գործ կար. ծանր, բայց նվիրական: Ուսուցիչների ու աշակերտների համատեղ ջանքերով վերանորոգել են մետաքսի գործարանը, հետո կառուցել են դասախոսությունների համար նախատեսված *Նիքոլ Հոլլը*, հետո ճաշարանը՝ երեք մասերով: Դրան զուգահեռ նրանք կառուցել են նաև դասարաններ, արհեստանոցներ, գրադարան, ընթերցասրահ, խոհանոց, ճամբարներ և պարտեզ²⁴:

21 «Մտքի աշխատանք», *Տուն*, օգոստոս 1923, թիվ 12, 20:

22 *Յուշամատեն*, 132:

23 Նույն տեղում, 10:

24 Նույն տեղում:



Ջրելի որբանցի հատակագիծը

Որբանցում ողջ օրվա ընթացքում մշտապես սերտ են եղել ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները և այդ մասին հետաքրքիր դիտարկումներով է կիսվում Մ. Ղազարյանը՝ գրելով. «Աշխարհի ամենաազնի ու մաքուր զգացմունքները կրնանք գտնել ուսուցիչներու անձնուեր սրտերու մէջ դէպի իրենց աշակերտները. ... աշակերտը կ'սպառէ, ուսուցիչը կը յոգնի, աշակերտը կը շահի, ուսուցիչը կը գոհուի, աշակերտը կ'ողջունայ: Եւ վերջապէս ուսուցիչն յոյսը աշակերտին ապագային վրայ է ու աշակերտին ապագան ուսուցիչին ներկայէն կախեալ է»²⁵:

Հետևելով «Առողջ մարմնում՝ առողջ հոգի» կարգախոսին

Ամսագրի առաջին համարներում հատուկ ուշադրություն է դարձվում մարզական կյանքին: «Ընտիր Խոհեր» բաժնում ներկայացվում է Հայ սկաուտի բնութագիրը և «Բարձրացիր, բարձրացուր» կարգախոսի նշանակությունը: «Հայ մարմնակրթական Ընդհանուր Միության» գրքույկից վերցված ու ամսագրի համարներում է շարադրված նաև սկաուտի երգը, նրանց կարգախոսը, 12 կանոնները, որոնց պետք է հետևի սկաուտը, «Հայ մարմնակրթական ընդհանուր միության» հայտագիր-ծրագիրը²⁶:

25 Մ. Ղազարեան, «Ուսուցիչը և Աշակերտը», *Տոն*, սեպտեմբեր-հոկտեմբեր 1923, թիվ 13-14, 5:

26 Քաղուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) գրքույկէն, սեպտեմբեր 1922, թիվ 1, 15-17:

Ամսագրի երկրորդ համարում նույնպես անդրադարձ կա սկաուտի կերպարին, նրանց աստիճանակարգին, թե ինչ փուլերով պիտի նորընծա սկաուտն անցնի, ինչ հմտությունների պետք է տիրապետի:

Նշվում է առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ պայմանները՝ սնունդ, օդ, մարմնամարզություն: Նշենք նաև, որ որբերի առողջ լինելուն նպաստել են նաև որբանոցի աշխարհագրական պայմանները:

Հատուկ տեղ է հատկացված սկաուտական խմբերի կազմավորմանն ու նրանց բաշխմանը, նիզակադրոշին, խմբադրոշին, ինչպիսին պետք է լինի առաջնորդը կամ առաջնորդները. «իրենց պատվոյ կէտ մը պէտք է համարեն սքաուտի դասանալքը իրենց ընկերներուն յարգել տալը և այդ սկզբունքին իրենց անձովն իսկ պէտք է իբր օրինակ ծառային»²⁷: Չորրորդ համարում շարունակվում է ներկայացվել նոր խմբերի կազմավորման կարգը, անդրադարձ կա տեղական խորհուրդներին ու անդամներին²⁸:

Հինգերորդ համարում «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» կարգավստով Զաքարի հոգևածն է, որտեղ կրկին խոսվում է սկաուտի հավաքական կերպարի, դրական հատկանիշների մասին և եզրակացվում. «Վաղուան մարդը սքաուդն է, յառաջապահը բոլոր անոնց որ իրենց «ես»-երը առնակաօրեն կը գոհեն յօգուտ ընդհանուրին ներդաշնակութեան»²⁹:

Ամսագրի վեցերորդ համարում մանրամասն ներկայացվում է, թե ինչպիսի տեսք ունի սկաուտի համագգեստը, ինչ բաղկացուցիչ մասեր, ինչպես են գումարվում ժողովները և ներկայացվում է նաև անդամակցությունից հրաժարվելու կարգը³⁰: Ամսագրի բովանդակությունից պարզ է դառնում, որ որբերը քաջածանոթ էին «Հայ մարմնամարզ» թերթի հիմնադիր, Հայոց ցեղասպանության գոհ, բազմաթիվ մրցանակների արժանացած Շավարշ Քրիսյանի գործունեությանը: Ամսագրի այս համարում հանդիպում ենք նաև վերջինիս նկարին՝ մակագրված՝ ՀՄԸՄ հիմնադիր³¹:

Որբանոցում կարևորվում էր նաև սպորտային մրցումների դերը, ինչպես նաև մարզական արշավները: Աշակերտների համար պարբերաբար արշավներ էին կազմակերպում դեպի Նահր Իբրահիմ և որբանոցի հարակից շրջաններ, անգամ մեկնել են Բիբլոսի բերդի տարածքում պեղումների:

Որբանոցում հատուկ ուշադրություն է դարձվել նաև առողջությանը, ողջունվել է առողջ ապրելակերպը, հիգիենայի պահպանման կանոնները, ինչի անդրադարձը տեսնում ենք ամսագրի էջերում:


27 «Յայտագիր-Ծրագիր», *Տոն*, նոյեմբեր 1922, թիվ 3, 13-18:

28 Նույն տեղում, 10-12:

29 Զաքար, «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր», *Տոն*, հունվար 1923, թիվ 5, 2-3:

30 «Յայտագիր-Ծրագիր», *Տոն*, փետրվար 1923, թիվ 6, 13-15:

31 «Շավարշ Քրիսեան. դիմանկար», *Տոն*, հոկտ.-նոյեմ.-դեկտ. 1924, թիվ 26-27-28, 31:



Գծանկար. առողջ լինելու գաղտնիքները

Որբանոցային կյանքում կարևոր խնդիրներից էր առողջ ատամներ ունենալը: Ամսագրում հայտարարություն է տրվել այդ առիթով. «Օգտունեցեք առիթէն. Բժիշկ Սրապեանը որբանոցում է որբերի ատամները բուժելու համար»³²: Որբերի հետ առողջապահական խնդիրների մասին իր հուշերում պատմում է բժիշկ Սրապյանը, ով 1923 թ., ավարտելով Բելյուրի Ամերիկյան համալսարանի ատամնաբուժական ֆակուլտետը, նշանակվում է որբանոցում աշխատանքի:

Նա իր հուշերում գրում է, որ որբերին ոգևորելու համար անգամ ամենամյա միջորբանոցային մրցույթներ են կազմակերպվել «առողջ ատամներ» անվանակարգով և միայն երկար, պարբերաբար տարվող աշխատանքի արդյունքում են Ջրելյի տղաները հաջողություն գրանցում և հաղթանակը խորհրդանշող փոխանցիկ գորգ-դրոշմ ձեռք բերում³³:

Ամսագրում պարբերաբար հանդիպում ենք տարբեր առողջապահական խորհուրդների, որոնք ընթերցողին բերում են այն մտքին, որ առողջության առաջին պայմանը մաքրությունն է, և առողջությունը պարկեշտության վկայագիրն է³⁴:

Կարելի է նկատել, որ սկզբնական շրջանում աշակերտական ամսագրի խմբագրությունը դեռևս թեմատիկ որոնումների մեջ էր՝ փորձում էին կողմնորոշվել, թե ինչ շեշտադրումներ անել, որն ավելի հստակ է դառնում ավելի ուշ լույս տեսած համարներում:

32 «Օգտունեցեք առիթէն», *Տոն*, մարտ 1924, թիվ 19, 2:

33 *Յուշամատեն*, 294-295:

34 «Առողջապահական խրատներ», *Տոն*, հունիս 1925, թիվ 34, 29:

Անդրադարձ հոգևոր կյանքին

Ամսագրում անդրադարձ կա նաև որբանոցի հոգևոր կյանքին: Որբերը միշտ ունեցել են հոգևոր դասաժամեր, քննարկել են աստվածաշնչյան թեմաներ ու քրիստոնեությանն առնչվող հարցեր: Իհարկե, որոշ տարբերություններ ու տարաձայնություններ եղել են առաքելական և բողոքական եկեղեցիների արարողակարգերի միջև, բայց դատելով որբերի հուշագրություններից ու ամսագրի հոդվածներից՝ որբերը տարբերակել են վերջիններս: Ճաշից առաջ միշտ աղոթել են փոխնիփոխ «Հայր Մեր»-ը կամ «Փառք ու պատիվ Քեզ»-ը: Ֆիլիփ Չաքարյանի «Ես Ճիպէյի որբերէն եմ» հուշերում կարդում ենք, որ այքերը փակ աղոթողներին մյուս որբերը ծաղրում էին³⁵: Նշենք, նաև, որ որբերն իրենք էին խոստովանում, որ միշտ չէ, որ որբանոցում բոլոր երգերը նույն խանդավառությամբ էին կատարվում: Նրանց երգացանկի «Բամբ Որոտան», «Մայր Արաքսի», «Ի զեն հայեր, ի սուր», «Կռուեցէք տղերք» երգերը ավելի լիաթոք էին երգվում, իսկ այդ թափն ընկնում էր, դժգունում էր և այլակերպվում, երբ բողոքական քարոզչական բնույթի երգեր էին երգում: Որբերը ճնշող մեծամասնութեամբ հայ ազգային եկեղեցու զավակներն էին, հետևաբար զարմանալի չէր նման վերաբերմունքը, երբ պարտադրված էին այքերը փակել ու գլուխները խոնարհել, մինչդեռ նույն հարկադրանքը չկար շարականներ երգելու պարագայում³⁶:

Քրիստոնեական թեմաներով աշակերտական մտորումների հանդիպում ենք գրեթե բոլոր համարներում: Այս ուղղությունը նույնպես կարևոր էր աշակերտների մեջ հանդուրժողականություն ձևավորելու համար: «Կիրակնօրեայ խորհրդածություն» խորագրի տակ կարդում ենք. «...մարդու բերանից ելածն է, որ մարդս կը պղծէ ... Մեր բերանը մեր հոգու մտածումին և զգացումին թարգմանն է»³⁷, ուստի խորհուրդ է տրվում այդ սկզբունքով առաջնորդվել:

Խրատական տողերը շարունակվում են. «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ հոգեկան սնունդով: Նպատակը միջոցը չ'արդարդացներ և պետք է փառասէր չ'ըլլալ՝ այլ անձնուէր»³⁸:

Խոսելով փորձությունների մասին՝ հոդվածագիրը գրում է. «Անօթությունը, պատսպարուելու համար եղած պետքը զինք կը մղէ կեանքի դժուարություններու դէմ պայքարելու: Բայց մարդ նաև պետք կ'ունենայ շատ մը բաներու որ իր նկարագիրը կը կազմեն ինչպէս պետք ունի նիւթական սնունդի պետք ունի նոյնպէս բարոյականութեան»³⁹:

Սկզբնական շրջանի համարներում աղոթքի անհրաժեշտությունը շատ է զգացվում որբերի մոտ, տխրության, անգամ՝ հիանալի բնության և եղանակին հակառակ: «Աղօթէ՛» հոդվածում հեղինակը նկարագրում է առավոտյան իր ունեցած

35 *Յուշամատեն*, 243:

36 Նույն տեղում, 117:

37 Վ. Ա., «Կիրակնօրեայ խորհրդածություն», *Տուն*, դեկտեմբեր 1922, թիվ 4, 2:

38 Նույն տեղում:

39 Նույն տեղում, 3-4:

զգացողությունները, երբ իրեն տխրեցնում է մայր թռչունի ծվլոցը, մորն է հիշում և սկսում լաց լինել: Այդ պահին Ձայն է լսում. «Հէ՛, պատանեակ, ինչո՞ւ համար այսքան արցունք կը թափես: ... Ելի՛ր, տղաս, ու այդ լալուդ ու ողբալուդ տեղը աղօթէ այն Աստծոյն, որ քեզ այս կեանքը շնորհած ու պարգեւած է ... կը կրկնեմ ու կ'ըսեմ քեզի թէ աղօթէս, պիտի հասնիս քու նպատակներուդ»⁴⁰: Այս երևակայական խոսքերը խոր տպավորություն են թողնում երիտասարդի վրա. «Եւ ահա տխրութիւնները ու վշտերը փարատուեցան ու ուրախութեան հոսանք մ'անցաւ ամբողջ էութեանս մէջէն»⁴¹:

«Իսաչն է իր պարծանքը» հողվածը, որտեղ նկատելի է խոր հավատը կրոնի նկատմամբ և հեղինակը՝ Ա. Արուշանը Քրիստոսի օրինակը բերելով՝ գրում է. «Հայ տղայ, հետեւի՛ր այդ օրինակին, լավ հասկցիր խաչի խորհուրդը և իրատուք ունեցիր ըսելու- Իսաչն է իմ պարծանքը»⁴²:

Կան բարոյական ու հոգեբանական թեմաներով հողվածներ. օրինակ՝ Մ. Սարգիսյանի հեղինակած «Քրիստոսի կեանքը կառավարող սկզբունքները» հողվածում կարևորվում են հետևալ գաղափարները՝ սերը, համայնասիրությունը, հավատքը, անաչառությունը, մարդկանց արժանիքների գնահատումը, դրամապաշտ չլինելը, հավատարմությունը, աշխատանքը և պաղարյունությունը⁴³:

1923 թ. հուլիսի համարում կարդում ենք Ա. Ներսեսյանի հեղինակած «Դժբախտութեան պատճառը» հողվածը, որտեղ նշվում է, որ մարդիկ միշտ իրենց դժբախտության պատճառը ուրիշի մէջ են փնտրում, թե ինչու Աստված իրենց դժբախտ է թողել այս աշխարհի վրա ու իրենց միլիոնատեր կամ խելացի մարդու զավակ չի դարձրել, այլ խղճուկ գյուղացու կամ բանվորի զավակ և չեն կարող կյանքի բարիքները վայելել: Հեղինակը եզրակացնում է, որ նման մտածումները վնասում են մարդու առողջությանը և դրանով մարդն ինքն իր նկատմամբ մեղք է գործում: Այս մտածումների մէջ հայտնվող իր հասակակիցներին նա կոչ է անում. «Ո՛վ բարեկամ, բախտը քու մէջդ է և դուն քու բախտը որոնողը: Երբէք ուրիշներու մէջ մի՛ փնտտէր քու դժբախտութեանդ պատճառը, այլ ուղղէ՛ քու թերութիւններդ և յաղթէ՛ մոլութիւններուդ կամ մէկ խօսքով տիրէ՛ դուն քու վրադ ... որոշէ՛ զայն գործադրել ամէնապզտիկ բաներէն սկսեալ: ... Ուրեմն ժամանակ մի կորսնցներ...»⁴⁴:

«Հարութեան տոն» հողվածը նույնպես քրիստոնեա-հայրենասիրական ուղղվածություն ունի, որտեղ հեղինակ Հրանդ Լամպաճյանը, խոսելով Քրիստոսի Հարության տոնի խորհուրդի մասին, շարունակում է միտքը և գրում. «Մտքովնիս ակնարկ մը դէպի արինտոտ տարիները, որոնց մութուստուներ հորիզոններուն խորքերէն մեր անգին նահատակները արդար վրէժի պարտականութիւններով կը ծանրաբեռնեն մեզ: Անոնց կորուստովն մեր ազգը ողբալի համրութեան մատնուեցաւ ... Բայց անոնք կ'ապրին

40 Վ. Աղաճանեան, «Աղօթէ՛», *Տն՛ւ*, դեկտեմբեր 1922, թիվ 4, 3:

41 Նույն տեղում:

42 Ա. Արուշան, «Իսաչն է իմ պարծանքը», *Տն՛ւ*, հոկտեմբեր 1922, թիվ 2, 16:

43 Մ. Սարգիսեան, «Քրիստոսի կեանքը կառավարող սկզբունքները», *Տն՛ւ*, հունիս 1923, թիվ 10, 16-17:

44 Ա. Ներսեսեան, «Դժբախտութեան պատճառը», *Տն՛ւ*, հուլիս 1923, թիվ 11, 2:

և պիտի ապրին ... Անոնք յարութեան գաղափարներով օժտեցին իրենց թերաւարտ կեանքը, որ անմահութեան դասինեպսակովը պճնեցնեն իրենց արի ճակատները»⁴⁵:

Հոգեբանական տեսանկյունից որբերի՝ նման թեմաներին անդրադառնալը նույնպէս օրինաչափ է, քանի որ Յեղասպանության հոգեցնցումն որբանոցի սաները փորձել են հաղթահարել կրոնի, եկեղեցու, հավատքի միջոցով⁴⁶:

Այսպիսով, նմանատիպ քրիստոնեական, և, առհասարակ, բոլոր նյութերը պետք է դիտարկել ոչ այնքան բովանդակային տեսանկյունից, որովհետև դրանց որբերը կարող էին ծանոթանալ նաև դասերի ընթացքում, այլ ուսուցողական, քանի որ հեղինակել էին իրենց հասակակիցները, և նմանատիպ հողվածներում տեղ գտած խորհուրդների ընկալումը կարող էր օրինակելի լինել որբանոցի երեխաների մեծ մասի համար, քանի որ ամսագրի ընթերցումն ընդունված երևույթ էր որբանոցում:

Հայկական ինքնության պահպանման նախաձեռնություններ

Ամսագրի գերակշռող համարներում անդրադարձ կա նաև մեծանուն հայ ուսուցիչներին և հոգևոր հայրերին: Տարբեր դրվագներով ներկայացվում են Մերոպ Մաշտոցի, Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի գործունեությունը, տրվում՝ գնահատականներ:

Ս. Քեչիշյանի «Մեծ գիտը» հոդվածում կարդում ենք. «Հայ ժողովուրդը գտած է այն ճշգրիտ հայելին որմէ պիտի ցոլանար իր ազնիւ զգացումներուն ինքնայատուկ յղացումները»⁴⁷, որին նույն համարում հաջորդում է «Հայ գրականութիւնը» հոդվածաշարի հերթական հոդվածը, որտեղ կրկին ընդգծելով գրերի գյուտի կարևորությունը՝ հեղինակը եզրակացնում է. «Իր երևոյթով որքան նոր, նոյնքան շքեղ ու փառաւոր տարեգլուխ մը կը բացուէր, ծնունդ պիտի տար ազգային ճոխ ու բեղմնաւոր գրականութեան մը»⁴⁸: Եվ Մերոպ Մաշտոցի գործի շարունակողներ է նշում Մովսէս Խորենացուն, Փափստոս Բուզանդին, Ագաթանգեղոսին⁴⁹: Նույն համարում անդրադարձ է արվել նաև հայոց լեզվին, ներկայացվել տարբեր ժամանակահատվածներում հայոց լեզվի կրած ազդեցությունները՝ ընդգծելով, որ դրանք չեն կարողացել ջնջել վերջինիս առանձնահատկությունները: Հոդվածագիրը ներկայացնում է հայոց լեզվի անցած ողջ ճանապարհը՝ գրերի գյուտից, Ոսկեդարից մինչև Գրիգոր Նարեկացի, հայկական տպագրության սկզբնավորումից մինչև Խաչատուր Աբովյան, Ռաֆայել Պատկանյան, Նահապետ Ռուսինյան և Գրիգոր Օտյան⁵⁰ և եզրափակում է հոդվածը. «Աւա՛ղ, Մեծ Եղեռնը հայ գրականութենէն շատ լաւ առաջնորդներ խլեց, բայց հայ լեզուն, հայ միտքը, աւելի քան երբեք յոյսով կը նայի ապագային»⁵¹:

45 Հ. Լամպանեան, «Յարութեան տոն», *Տոն*, ապրիլ 1924, թիվ 20, 25:

46 Մելինէ Գարագաշեան, *Յեղասպանության հոգեցնցումն ու ազգային ինքնությունը* (Երևան, Դավ, 2006), 91:

47 Ս. Քեչիշեան, «Մեծ գիտը», *Տոն*, հունիս 1924, թիվ 22, 5:

48 Հ. Յակոբեան, «Հայ գրականութիւնը», *Տոն*, հունիս 1924, թիվ 22, 22:

49 Նույն տեղում, 25:

50 Հ. Մարգարեան, «Հայոց լեզու», *Տոն*, հունիս 1924, թիվ 22, 26-30:

51 Նույն տեղում, 30:

Նշենք, որ գրերի գյուտի, քրիստոնեության ընդունման մասին հողվածները հարուստ տեղեկատվական նյութ ունեն, հայրենասիրական ոգով: Անգամ որոշ նմանատիպ հողվածներ կարող են նաև դասագրքային ձեռնարկի հաջող հողվածներ դառնալ: Բացի բուն քրիստոնեությանը վերաբերող հողվածներից, ամսագրի տարբեր համարներում անդրադարձ կա նաև Հայաստանում քրիստոնեության ընդունմանը, նրա տարածողներին, ինչպես նաև մանրամասն ներկայացվում են պատմական իրողությունները: Հայրենասիրական ոգով անդրադարձ է կատարվել քրիստոնեությանը, ինչպես նաև հավատի համար պայքարող Վարդանանց պատերազմին⁵²:

Հայ մեծերի, գրականության, հայոց պատմության վերաբերյալ ամսագրում տեղ գտած հողվածների հիմնական գաղափարախոսությունը կարելի է ամփոփել հետևյալ պարբերությամբ. «Անտեսել նիթականը, պայքարել գաղափարի համար, ասոնք տեսլապաշտ ժողովուրդի մը մեծագոյն յատկանիշներէն են, որոնք թէև կցնդին երբեմն իրերու արտաքին տեսքին և պաղ իրականութեան առջև, բայց և այնպէս ազգի մը, ժողովուրդի մը և համայնքի մը գոյութեան յարատև պահպանման մեծագոյն ազդակներն են»⁵³:

Ինչ վերաբերում է դպրությանն ու քրիստոնեությանը, ապա հողվածագիր Զաքարի կարծիքով, վերջիններս այն գույգ ազդակներն են, որ պետականության անկումից հետո սատար եղան հայ ժողովուրդի հարատև գոյությանը, նրանք պահպանեցին և զարգացրին մեր ազգային առանձնահատկությունները և ձիրքերը⁵⁴:

Հարկ է նշել, որ հայ գրականության մեծերի մասին հողվածներով, ամսագիրն իր որակի մեջ անգերազանցելի է: Այս ուղղությամբ տարվող աշխատանքների մեջ նկատվում է նաև որբանոցում գործող Գրական ակումբի դերը, որը որոշակի ազդեցություն է ունեցել հողվածների հարուստ բովանդակության վրա: Նշենք, որ իր 34 համարներում ամսագիրը կարողացել է որբերին ներկայացնել իրենց ազգի պատմության հայտնի գրողներին ու բանաստեղծներին: Առանձին հողվածաշարերով ներկայացվել են հայ գրականության դարաշրջանները:

«Հայ գրականություն» խորագրով շարքի առաջին հողվածում խոսվում է Ոսկեդարի, նրա առանձնահատկությունների, ժամանակի պատմագիրների և նրանց թողած աշխատությունների մասին⁵⁵: Շարքն ընդարձակ է, երկրորդ մասում խոսվում է Անանիա Շիրակացու, Գրիգոր Նարեկացու մասին, որից հետո անդրադարձ կա կիլիկյան գրականության մեծերի՝ Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Պահլավունու, Մատթեոս Ուռուխացու գործունեությանը, այնուհետև խոսվում է Մայրա Նովայի առանձնահատուկ գրական ոճի մասին⁵⁶:

Հողվածաշարի հաջորդ նյութում Հ. Տեր-Հակոբյանն անդրադառնում է նաև Մխիթարյան միաբանության գործունեությանը, Արևմտյան Հայաստանից բազմաթիվ

52 Զաքար, «Վարդանանք. 15 դարերու մեջէն», *Տոն*, փետրվար 1923, թիվ 6, 2:

53 Նույն տեղում:

54 Նույն տեղում, 2-3:

55 Հ. Տեր-Յակոբեան, «Հայ գրականությունը», *Տոն*, հունիս 1924, թիվ 22, 20-23:

56 Հ. Տեր-Յակոբեան, «Հայ գրականությունը», *Տոն*, հուլիս 1924, թիվ 23, 63-65:

հայ երիտասարդների Եվրոպա, մասնավորապես՝ Իտալիա և Փարիզում կրթություն ստանալու և հայ գրականության ու ազատական գաղափարների տարածման փաստին⁵⁷: Հ. Տեր-Հակոբյանն անդրադառնում է նաև Ռուբեն Զարդարյանի, Արփիար Արփիարյանի, Ակնունու, Դանիել Վարուժանի, Միսաք Մեծարենցի գործունեությանը⁵⁸: Հատուկ անդրադարձ կա նաև ցեղասպանության զոհ հայ մտավորականներին: Պետք է նշել, որ վերջիններս ժամանակակից գրողներ էին, բայց անգամ նրանց գործունեության մասին որբերն ունեին հստակ պատկերացումներ ու ծանոթ էին նրանց ստեղծագործություններին: Օրինակ, Ս. Փիլիկյանի բանաստեղծությունը՝ նվիրված Միամանթոյին կամ ամսագրի էջերում գետեղված է Ջոհրապի նկարը՝ մակագրված «Հայ գրականության առաջին վարպետը իրապաշտ գրականության և իշխանը նորավելպի արուեստին, և միանգամայն իր պետական բարձր դիրքին շնորհիվ եղած է թրքահայերու միակ պաշտպանն ու տէրը»⁵⁹, Ռուբեն Զարդարյանի նկարը՝ մակագրված «Հայ գրական շքեղ փառանգին ամենէն կարկառուն դէմքերէն մէկը»⁶⁰:

«Եօթը նահատակներուն» հոդվածի հեղինակը, դիմելով Մեծ Եղեռնի յոթ նահատակներին, որոնց անունները չի նշում, գրում է. «Ո՛վ դուք հայկական ազատության հսկայ հաւատքը դարբնող վեհ իտալի աստուածացած եօթը կոթողներ, ահա այսօր ձեր ոսկի գրիչներով քանդակուած վերակենդանացուցիչ կայծը դէպի յաղթանակին, դէպի հսկայ հաւատքին եւ դրախտային արշալոյսներու գագաթնակէտը բարձրացող ձեր մերթ լալկան տառապանքի ձայնը, եւ մերթ խրախուսող, մերթ վրէժի բազուկը բարձրացնող ոգին մեզ կը մղէ դողդողագին մոտենալու ձեր Աստուածային հոգիներուն հոգոյս թարգման ըլլալ: ... Դուք մեռաք ազատության լայն ճամբուն վրայ, մինչ ձեր մահը միշտ որոնելով բարձր նպատակը»⁶¹: Վերջում, խոսքն ուղղելով Միամանթոյին, գրում է. «Եկնոր և տես, քեզի հետ և Գողգոթայի գագաթը բարձրացուցին թշուառ ազգդ, եկնոր անգամ մըն ալ օրինէ ցեղիդ թափուած արիւնը ... եկնոր անգամ մըն ալ զարկ արդարության դռները ...»⁶²:

Որբանոցային ամսագրում հայկական ինքնության, ազգային արժեքների պահպանման, հայրենիքի վերադարձի մասին նույնպես բազմաթիվ աշակերտական մտորումներ կան, որի հետաքրքիր և դիպուկ ձևակերպումը տվել է Ա. Յափուջյանը: Հարկ ենք համարում այն մեջբերել գրեթե ամբողջությամբ. «Բաղդը սև է, և կը փոխէ մարդուս թէ՛ կերպարանքը, թէ՛ լեզուն և թէ՛ կրօնքը, բայց ոչ հայությունը: Հայը հաստատուն է թէ՛ իր լեզուին, թէ՛ իր գրականությանը և թէ՛ կրօնքին վրայ, ո՛չ բաղդը, ո՛չ սուրը, և ո՛չ ալ հուրը կրնայ գիրենք փոխել: Այն որ հայու արիւնն կը կրէ իր երակներուն մէջ, այն որ հայը տենչք ունի իր սրտին մէջ, և այն որ ազգային ոգով տոգորուած է, երբէք չի մոռնար ո՛չ իր կրօնքը, ո՛չ լեզուն, ո՛չ ալ մայրենի աշխարհը: Այսօր մեր ալ

57 Նույն տեղում, օգոստոս 1924, թիվ 24, 5-7:

58 Նույն տեղում:

59 Ժ. Մանուկեան, «Եօթը նահատակներուն», *Տոն*, ապրիլ 1924, թիվ 20, 7:

60 Նույն տեղում, 4:

61 Նույն տեղում, 8:

62 Նույն տեղում, 10:

բաղդը մեզ առած կը տանի: Այսօր հոս, վաղը ուրիշ տեղ, միշտ բաղդին խաղալիք ենք:

Մենք որք եղած ենք այս կրօնքին ու գրականության համար, հաւատքին համար:

Հերիք է ... Նետուինք կեանքի ասպարեզը և յանձնուինք բաղդին, որ մեզ ալ առաջնորդէ: Վերը՝ Աստուած, և վարը մեր կարողութեան վստահելով, նետուինք կեանքի ովկիանոսին մէջ ու մաքառինք կոհակներուն դէմ: Բայց բաղդին վստահիլը ապահովութիւն չէ: Բաղդը թող մեզի հետևի»⁶³:

Հայության պահպանմանն ուղերձ է հղում Ջրեյլի որբանոցի սանը 16 տարին լրացրած ու որբանոցային կյանքին հրաժեշտ տվող իր ընկերներին. «Անէ՛ծք, անէ՛ծք, և վայ անոր, այն հայուն, որ կը մոռնայ իր տառապեալ ցեղը և հայրենիքը, ուր իր պապերուն աճիւնները ցիրուցան՝ միայն իրենցմով կ'սփոփու: Հազար օրհներգ ու համբոյր ... այն հայուն, որ հայ կ'սպարի ու հայ կը մեռնի մայր երկրի սրտին հանգստաւէտ խորքը»⁶⁴:

Նշենք, որ բազմաթիվ են բանաստեղծությունները՝ հայրենի բնակավայրի, հայրական օջախի, խաղաղ կյանքի, ծնողական սիրո վերաբերյալ: Բայց դրան զուգահեռ մշտապես առկա են հայրենիք վերադառնալու, Մայր Հայաստանի, Արարատ լեռան մասին բանաստեղծություններն ու պատմությունները, որտեղ մշտապես նկատելի է համեմատական գիծը Մայր Հայրենիքի և սաների ճակատագրերի միջև, որը կարելի է ամփոփել հետևյալ տողերով. «Դուն կ'ողբաս քու վեց դարու տառապանք, Ես ալ իմին՝ սև օրերն ու հալածանք»⁶⁵:

Որբերն առանձնահատուկ ձևով են բացատրում սերն առ հայրենիք. «Ինչո՞ւ համար հայրենիք ունենալ կ'ուզենք ... որպէսզի ազատ կեանք մը վայելէնք թէ գիտութեան ուժով, թե ալ ֆիզիկապէս զօրանանք: Հայրենասրբաձներ ենք, որովհետև վեց հարիւր տարիներէ ի վեր բռնակալներու և անգութներու կողմանէ հալածուելով և արքայութեամբ զուրկ մնացած ենք մեր հայրենիքէն: Մենք մեր հայրենիքը կը սիրենք որովհետև մեր հայրենիքը մեզ համար սրբազան և իսկական բնակավայր մըն է: ... Այս, երնեկ տեսնեմ այն օրը, որ այս խեղճ հայութիւնը հայրենիք կը վերադառնայ և հանգիստ կեանք մը կ'անցնէ, սակայն օտարը մեզ երբեք չի փրկի, հայրենիք չի տար և մենք մեր արին-քրտինքը պիտի թափենք և վերականգնենք մեր հայրենիքը»⁶⁶:

1924-1925 թթ. համարներում նկատում ենք, որ որբերը հետամուտ էին լինում նաև ընթացող քաղաքական դեպքերին՝ 1918 թ. Հայաստանի Հանրապետության ստեղծում, հայ-թուրքական պատերազմ: Նրանք տեղյակ էին նաև միջազգային ատ-յաններում ընթացող բանակցություններին:

Հ. Իտիրյանը նշում է, որ այս ընթացքում տեղի են ունեցել տարբեր ժողովներ, վեհաժողովներ, միտինգներ, դիվանագիտական համաժողովներ և, վերջապես, Սևրի խորհրդաժողովը, ըստ որի պիտի իրականանար հայի դարավոր երազանքը՝

63 Ա. Եսփուլցեան, «Բաղդը», *Տո՛ւ*, սեպտ.-հոկտ., 1923, թիվ 13-14, 21-22:

64 Գ. Արիստակէսեան, «Երթաք բարով», *Տո՛ւ*, ապրիլ 1924, թիվ 20, 18-19:

65 Շ. Թագուորեան, «Ողջոյն», *Տո՛ւ*, օգոստոս 1924, թիվ 24, 36:

66 Յ. Քէլէճեան, «Ինչո՞ւ համար հայրենիք ունենալ կ'ուզենք», *Տո՛ւ*, օգոստոս 1923, թիվ 12, 3-4:

անկախ և ազատ Հայաստանը, որի կապակցությամբ կարդում ենք. «Ոհ, ինչ արդար արքա, վերջապես աշխարհ ճանչցավ մեր արդար վաստակը և վարձատրեց միլիոն մը նահատակներու ժողովուրդը ... Բայց ... մեծ յուսախաբույթին. կը քարանայ կրկին խիղճը, կը դադրին խոստումները և ժողովուրդը կը մնայ անտուն ու անապաստան»⁶⁷:

Իրենց ժամանակների համար խիստ արդիական հնչեղություն ունի հեղինակ Հ. Յափուճյանի կոչն՝ ուղղված սգի ու դժբախտությունների միջով անցած իր բախտակիցներին. «... Ու մենք չը վարանեցանք, չը վիհատեցանք և մեր արցունքները մեր այտերուն վրայ չորացուցինք, յոյսերու պատուանդանէն գահավէժօրեն գլորուեցանք ու մենք չզգացինք և ատելի կայտառ, ատելի երիտասարդ հրապարակ ելանք»⁶⁸: Նկարագրելով կյանքի դժվարությունները՝ նա եզրակացնում է, որ որք մնալուց հետո անգամ պետք է շտապում էր երկինքն իրենց համար, պիտի լուսարձակվեն դաշտերը⁶⁹:

Հայ ազգային գործիչների, հոգևոր այրերի այցելությունները նույնպես կարևոր էին որբերի հայեցի դաստիարակման համար: Նման այցելությունների մասին տեղեկանում ենք ամսագրի «Ներքին կեանք» բաժնից կամ հոդվածներից: Հիշարժան է եղել Երվանդ Օտյանի այցը և ինչպես նշվում է «խիստ կրթիչ նիւթի շուրջ բանախօսեց լսարանի մէջ: Յարգելի գրագէտը երկու օր հիւրասիրուել է վերջ մեկնեցաւ»⁷⁰:

1924 թ. սեպտեմբերի 26-ին որբանոց է այցելել Հայաստանի Հանրապետության լուսավորության նախկին նախարար Նիկոլ Աղբալյանը: Նա աշակերտների ու պաշտոնյաների ներկայությամբ 40 րոպե տևողությամբ «կուռ և շինիչ» բանախոսությամբ ոգևորել է ներկաներին⁷¹:

Ներքին լուրեր բաժնից տեղեկանում ենք, որ հունիսի 1-ին որբանոց է այցելել նաև վաղամեռիկ բանաստեղծ Մատթեոս Զարիֆյանի⁷² քույրը՝ Սիրան Զարիֆյանը (Սեզա), Գալուստ Կյուլպենկյանը և ուրիշներ:

Ամսագրում հրատարակվել է Սիրան Զարիֆյանի նամակը՝ «Տառապանքի եղբայրներ» վերնագրով: Նա մեծ ոգևորությամբ է պատմում որբերի հետ ունեցած իր հանդիպման մասին, երբ հարազատին կորցրածի վշտով գալիս է «անծանօթ մայրերի անծանօթ զուակներին այցի»: Նրա նամակը երկուստեք հուսադրող է. հեղինակը նրանց մեջ տեսնում է հավատը նոր կյանքի նկատմամբ, հայացք՝ ապագային ու սաներին խորհուրդ տալիս ապրել ու ապրեցնել՝ եզրափակելով իր նամակը «...

67 Յ. Իտիրեան, «Յուսախաբ ժողովուրդը», *Տոն*, օգոստոս 1924, թիվ 24, 11-12:

68 Հ. Յ. Յափուճյան, «Հայ որբին», *Տոն*, սեպտեմբեր 1924, թիվ 25, 21-22:

69 Նույն տեղում:

70 «Այցելություններ», *Տոն*, մարտ 1924, թիվ 19, 37:


71 «Ներքին լուրեր», *Տոն*, սեպտեմբեր 1924, թիվ 25, 56:

72 Հայ բանաստեղծ, արևմտահայ պոեզիայի վերջին ներկայացուցիչներից: Կրթությունը ստացել է Կ.Պոլսի Պերպերյան վարժարանում, Պարտիզակի Ռ-որերտ քոլեջում, որն ավարտել է 1913 թվականին՝ Պասկավոր Արվեստից տիտղոսով: 1914 թվականին որպես անգլերենի և մարմնամարզության ուսուցիչ աշխատել է Ադանա քաղաքի հայկական դպրոցում: Թուրքական բանակում ծառայելու տարիներին ձերբակալվել է, միջնորդությամբ միայն կարողացել է ազատվել, 1919-1921 թթ. աշխատել է Պերպերյան վարժարանում՝ որպես անգլերենի և մարմնակրթության ուսուցիչ: 1924 թ. 30 տարեկանում մահացել է Կ.Պոլսում, թոքախտից:

ու մենք երջանիկ պիտի վազենք նորից ու լցնենք դատարկ տեղերը մեր երջանիկ ատերակներու»⁷³:

Նշենք նաև, որ սեպտեմբերի 25-ին Բեյրութում լույս տեսնող «Փիւնիկ» թերթի խմբագրապետերը՝ Ա. Հովհաննիսյանը, Խ. Թութունջյանը նույնպես այցելել են որբանոց և բանախոսել: Բանախոսներն իրենց հայրենասիրական զգացումներով և հռետորական կարողություններով մեծ ոգևորություն են պատճառել երեխաներին»⁷⁴ խոսելով «օգտակար և կրթիչ նիւթերու շուրջ»⁷⁵:

Որբանոցի ճակատագրին պարբերաբար հետամուտ է եղել նաև Մեծի Տանն Կիլիկիո Սահակ Բ Խապայան կաթողիկոսը, ով մի քանի անգամ տարբեր միջոցառումներին մասնակցելու կապակցությամբ այցելել է որբանոց:



Սահակ Բ կաթողիկոսի ուղերձը «Տուն» ամսագրի խմբագիրներին

1924 թ. սեպտեմբերի 15-ին Սահակ Կաթողիկոսը նամակ է ուղղել որբանոցի ամսագրին՝ այն վերնագրելով՝ «Սիրելի ճարտարապետներ Աշակերտական «Տուն»-ի Ճիպէլյի Ամերիկյան որբանոցին», որտեղ նա շտրիակալություն է հայտնել ամսագրի 1924 թ. համարների համար ու նշել, որ աշակերտներն էլ նման են ճարտարապետների ու մառախլապատ ժամանակներում են սկսել «Տուն»-ի վերականգնման աշխատանքները, երբ երկու հակառակ հողմեր սպառնում էին հայ կյանքը խամրեցնել և դիմակայելու համար խորհուրդ է տալիս. «...Մեծ վտանգներուն մեծագոյն յոյսը պէտք է տիրակալէ, անվիատ շարունակեցէք շինութիւնը, այսօր ալ, վաղն ալ պէտք ունի հայ Տուներու: Հայրենի հողի վրայ շինելը ատելի դիրիին ու ապահով է, որովհետև հայի յատկութիւնը, ուժը, տարողութիւնը և սովորութիւնը ծանօթ են, իսկ օտար հողը անծանօթ ըլլալուն մանրակրկիտ ուսումնասիրութեան պէտք կայ: Քարը քարի վրայ

73 Սիրան Զարիֆեան, «Տառապանքի եղբայրներ», *Տուն*, հուլիս 1924, թիվ 23, 46-48:

74 «Ներքին լուրեր», *Տուն*, հուլիս թիվ 23, 1924, 68:

75 Նույն տեղում, 69:

դնելով գործը չի վերջանար, հաստատուն կարծուած ատեն՝ անակնկալ խորշակի շունչ մը ամեն բան քարուքանդ կ'ընէ, և ամէն աշխատանք կ'ունայնացնէ: Բարոյական տան մը շինութեան գլխատր ատաղձն է լեզուի, գաղափարի, գգացման և սկզբունքի համերաշխութիւնը»⁷⁶: Վերջում նա պատգամ է ուղղում աշակերտերին. «Աչքերնիդ չորս կողմերնիդ դարձուցէք, պիտի տեսնէք, որ արաբախօս, թրքախօս, քրտաբարբառ հայերը կէս հայեր են: Այս պարագան նկատի ունեցէք, որպեսզի «Աշտարակ»ին պէս կիսաարտ չմնայ Ձեր սկսած «Տուն»-ը: ... Աշխատեցէք լաւ Հայեր ըլլալ»⁷⁷:

Հաջորդ համարում կարդում ենք Սահակ Կաթողիկոսի մյուս նամակը՝ ուղղված «Հայաստանի աներակ տուները շինելու պատրաստող սիրելի ճարտարապետներ Պիպլոսի որբանոցին», որտեղ նա շնորհակալութեամբ է խոսում Մերձավոր Արևելքի նպաստամատուց կազմակերպության մասին՝ կարևորելով նրա դեկտեմբերի 7-ի ձեռնարկը և կոչ անում գնահատել նրանց ջանքերը: Կարևորում է այն փաստը, որ իրենք անտարբեր չմնացին փողոցում հայտնված որբերի կամ որբանոցներում ապաստանած երեխաների նկատմամբ: Կաթողիկոսն իր խոսքն ավարտում է օրհնանք-կոչով. «Ապրեցէք մեր հայրենիքի կենդանի հաւատով, Ապագան Ձերն է»⁷⁸:

Հայ եկեղեցու հոգևոր հովիվները հետամուտ էին լինում որբանոցում տիրող իրավիճակին, մասնակցում էին տարբեր միջոցառումների, կազմակերպում հանդիպումներ, բանախոսություններ, որոնք ուղղված էին հայապահպան առաքելությանը: 1924 թ. դեկտեմբերի 15-ին որբանոցում պատարագ է մատուցվել Տ. Դիոնիս Ա. քահանա Տրեգյանի կողմից: Օրվա երկրորդ կեսին նա բանախոսել է «Ինչպէս պէտք է հայ ապրիլ» թեմայով և տարբեր օրինակներով, պատմություններով, հոգևոր հայրը բացատրել է նրանց նվիրական պարտավորությունները հայ ժողովրդի և մայրենի լեզվի հանդէպ, խոստացել պարբերաբար նման բանախոսություններով հանդէս գալ⁷⁹:

Որբանոցում հայկականության պահպանման վկայություններից է նաև այն փաստը, որ նշել են անկախության օրը՝ մայիսի 28-ը: Ամսագրից տեղեկանում ենք, որ անգամ հրավառություն են կազմակերպել որբանոցում: «Ձօն Մայիսի 28ի անկախութեան դարբիններուն» հողվածը խոսում է անկախ Հայաստանի վերակերտման մասին⁸⁰:

Հայոց ցեղասպանության վերապրումներ և վերհիշումներ

Պետք է արձանագրել, որ որբանոցում ապրիլքսանչորայան հիշատակության միջոցառումներ, սգահանդես նույնպես կազմակերպվել են: Արմեն Հակոբյանի «Յար-

76 Աշակերտական «Տուն»-ի Ճիպէլլի Ամերիկյան որբանոցի, սեպտեմբեր 1924, թիվ 25, 4-5:


77 Նույն տեղում:

78 Սահակ Կաթողիկոս, «Հայաստանի աներակ տուները շինելու պատրաստող սիրելի ճարտարապետներ Պիպլոսի որբանոցին», *Տուն*, հոկտ.-նոյեմ.-դեկտ. 1924, թիվ 26-27-28, 3:

79 «Տ. Դիոնիս Ա. Քնյ. Տրեգեան», *Տուն*, հոկտ.-նոյեմ.-դեկտ. 1924, թիվ 26-27-28, 62:

80 Գ. Ճըլճեան, «Ձօն Մայիսի 28ի անկախութեան դարբիններուն», *Տուն*, հունվար-մայիս 1925, թիվ 29-33, 6:

գանքի խօսք մը» հողվածը Ցեղասպանությանն ակնատես եղած փոքր սերնդի ունեցած տրավմայի արտահայտությունն է, որտեղ կարդում ենք. «Ով իմ մանկական վշտալի սրտիս և խորունկ ցավերուն թախծոտ թարգմաններ, յարգանք Ձեզ, ... Դուք Ձեր վեհոգի ու թանկագին կեանքը զոհեցիք ու խաչուեցաք թրքական անագորոյն սուրերու և գազանաբարոյ ճիւղալային ճանկերուն կաշկանդումին տակ: Դուք ինքնակամօրէն զոհուեցաք, դուք զոհուեցաք, որ ամբողջ հայութիւնը ազատուի ձեր թափած անմեղ արեան գինովը»⁸¹:



Հողված՝ սվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

1925 թ. ապրիլին նույաես անդրադարձ կա եղեռնի նահատակներին. «Յարգանք Նահատակներուն» հողվածում նույն հեղինակը՝ Արմէն Հակոբյանը գրում է, որ Մեծ պատերազմը բոլոր ազգերի տոների շարքում նոր տոն ավելացրեց՝ Նահատակաց կամ անծանոթ զինվորի տոն, հայ ժողովրդի համար էլ դա եղավ նահատակներին սվիրված ապրիլի 24-ը և շարունակելով գրում է. «Այսօր, ով մեր քաջարի ծնողներ ու եղբայրներ, ես կուգամ ոգեկոչելու Ձեր սրբազան յիշատակը: Դուք նահատակուեցաք Ձեր անսասան անխորտակելի հաւատքին, Ձեր ամենանստիրական գաղափարին փարուած ... Այսօր, Ձեր յետագայ սերունդը, Ձեր մանուկ որդիները հպարտութիւն կ'ունենան երբ կը յիշեն իրենց ծնողներու հաւատքը դեպի յարթանակը:

Դուք, հայ նահատակներ ... Ռահվիրան ու Ջահակիրը եղաք ազատութեան գաղափարին, և Ձեր նահատակութեամբ ատելի սրբագործեցիք զայն: Յարգանք Ձեր ծանօթ և անծանօթ շիրիմներուն: Յարգանք Ձեր անխորտակելի հաւատքին: Յարգանք Ձեր պաշտելի գաղափարին»⁸²:

81 Արմէն Յակոբեան, «Յարգանքի խօսք մը», *Տոն*, ապրիլ 1924, թիվ 20, 6:

82 Արմէն, «Յարգանք նահատակներուն», *Տոն*, հունվ.-մայիս 1925, թիվ 29-33, էջ 7:

«Յուշատետր» բաժնում կարդում ենք. «Ապրիլ 24 - Մեծ պատերազմի մեր նահատակներու տօնն է: Սգահանդէս մը ունեցանք»⁸³:

Նշենք, որ ցեղասպանության, կոտորածների, գաղթի ճանապարհի մասին հոդվածներն ամսագրում ավելի քիչ են. այս հանգամանքը, միգրացե, բնական է՝ հաշվի առնելով, որ որբերը չէին կարողանում խոսել իրենց տառապանքների մասին կամ, ամեն դեպքում, փորձում էին ամսագիրն ավելի դրական ու հուսադրող հոդվածներով ներկայացնել: Բայցևայնպես, ինչքան էլ նրանց ցանկությունը մեծ լիներ և ուսուցիչների կողմից միջամտությունն այդ ուղղորդմամբ տարվեր, միևնույն է՝ տխրությունը, կարոտը շոշափելիորեն զգացվում են ամսագրի էջերում: Թեկուզ բանաստեղծության մեկ արտահայտության՝ «Մոռնամք»⁸⁴ կամ հայրենի բնակավայրի մի դրվագի նկարագրությամբ, որոնք բավականին շատ են ամսագրում, կամ էլ այն զգացողությամբ, որ երեխաներ կան, ովքեր ծնողներ ունեն: Իր այդ ապրումների մասին է խոսում Արամ Աֆարյանը, երբ նվագախմբի անդամների հետ մեկնում է Բեյրութ՝ միջոցառման մասնակցելու համար: Երբ հասնում են Ազգային վարժարանի շենքի մոտ, նա իր համար տարօրինակ, վաղուց չսպրած զգացողություն է ունենում. «...նհ, ինչ զարմանալի բան, հայրիկի ու մայրիկի սեր վայելող հայ տղաքներ կան... ասոնք ինձի պես որբ չեն, ինչ ուրախությամբ կը խայտան...»⁸⁵:

«Իրիկուն» պատմվածքում կրկին տխուր հուշեր են, երբ հեղինակը գրում է, որ երեկոները, նստելով իրար դիմաց, պատմում էին իրենց *կարմիր* հուշերի մասին. «... մենք կը պատմենք մեր ուղիէն կրած մանկան գրկանքները ... Ու կը պատմենք, թէ ինչպէս հրէշ թուրքեր ըրին ծնողազուրկ հայ որբերը»⁸⁶:

Բավականին ազդեցիկ է Ս. Մկրտիչյանի՝ «Ջուրի արժէքը» (Յիշողութիւն) պատումը՝ ցեղասպանության և գաղթի մասին: Նա նկարագրում է գաղթի ճանապարհի իրենց կրած դժվարությունների մասին, երբ դժվար էր առանց քրի քայլելը, երբ ընտանիքի հայրը մտատանջությունից չզհտեր ինչ անել. «Մանուկներս սկսանք կանչել մայրիկ, ջնր, հայրիկ, ջնր. ինչ ընէին խեղճ հայրիկն ու մայրիկը, անոնք ալ մեզի չափ և մեզմէ աւելի կը տանջուէին: Երեկոեան անապատում շարունակ կանչում էին ջնր, ջնր: Իսեղճ հայրիկս ասղին կը վազէ, անղին կը վազէ, գուցե տեղից մը ջուր գտնէ ... և յուսահատ վիճակի մը մէջ ետ եկաւ: ... Այն ատեն հայրիկս իր սրտնեղութենէն սկսաւ մեզի հետ ինքն ալ լալ: Տեսնէիք թէ ինչպէս, իր պէխերուն մէջէն կաթիլ-կաթիլ արցունք կ'ուզար»⁸⁷: Այդ պահին ինքնաբերաբար սկսում են ողջ ընտանիքով աղոթել: «Առաջին անգամ, հայրս աղօթեց, ետքը մայրս, քոյրերս, ինչպէ՛ս ջերմեռանդօրէն մեր մանկական շրթունքներով աղօթեցինք»: Երեկոյան կայծակ ամպրոպ է լինում ու անձրև սկսում: Հուշագիրը գրում է. «Մենք սկսանք լեցնել մեր ամանները, այնչափ օրերէ ի վեր երեսնիս ջուր չէր տեսեր լաւ մը լուացինք ու խմեցինք մինչև որ կշտացանք,

83 «Յուշատետր», *Տոն*, հունվ.-մայիս 1925, թիվ 29-33, 35:

84 Ծ. Թագուրեան, «Մոռնամք», *Տոն*, հունվ.-մայիս 1925, թիվ 29-33, 61-62:

85 Ա. Աֆարեան, «Դէպի Պէյրութ», *Տոն*, հուլիս 1924, թիվ 23, 57:

86 «Իրիկուն», *Տոն*, հոկտեմբեր 1922, թիվ 2, 15:

87 Ս. Մկրտիչեան, «Ջուրի արժէքը» (Յիշողութիւն), *Տոն*, հոկտեմբեր 1922, թիւ 2, 16-17

սկսանք հրճուիլ: Եւ սկսանք փառաբանել մեր Աստուածը, որ մեզ անջուր չ'ձգեց»⁸⁸:

Տեղասպանության տարիների ունեցած հուշերից և դրանց հետևանքներին է անդրադառնում որբանոցի սան Արամ Աֆարյանը, ով ծնունդով Կեսարիայից է: Նա պատմում է իր անցած ճանապարհը, ծնողների կորուստը, ինչպես է հայտնվում 1921 թ. Կեսարիայի Ազգային խնամատարության որբանոցում, այնուհետև՝ 1922 թ., տեղափոխվում Նահր Իբրահիմի որբանոց և փորձում որբանոցում համակերպվել իրողությանը. «Նահր Իբրահիմի որբանոցին մէջ ես առաջին անգամ ճանչցայ իմ որբութիւնը, ճաշակեցի մեր գրականութեան սէրը, և առաջին անգամ հոն էր, որ մեր աննման դարբիններուն շնորհիւ սրտիս մէջ անխախտելիօրէն խարսխուեցաւ հայրենիքիս սէրը, հոն ես շուտով մոռցայ իմ ճակատագրական դժբախտութիւններս և սկսայ լողալ ցեղիս արիւնին մէջ»⁸⁹: 1923 թ. մալարիայի տարածման պատճառով որբանոցի սաների հետ տեղափոխվել է Ջբել, որտեղ անցկացրած տարիների մասին գրում է. «Փոխադրութիւնը բան մը չէ պակսեցուց ինձմէ ... այս նուիրական հաստատութեան մէջ մենք սկսանք ասելի եռանդուն և ասելի ոգետր կերպով շարունակել մեր սկսած գործը: Կրկնապատկուեցաւ իմ մէջ մեր գրականութեան և մեր հայրենիքի սէրը»⁹⁰:

Աբրահամ Կանիմյանը, վերհիշելով գաղթի ժամանակ մոր մահը, ցավով է արձանագրում իր՝ երբեմն կոպիտ վերաբերմունքով մորը ցավեցնելու հանգամանքը և գրում. «Թող քու անկենդան մարմնիդ աճիւնները ու Եփրատի հոսանքներուն յանձնուած անբիծ արեանդ վճիտ կայծիկները դժբախտ որդիիդ գալարուող սրտին ներում շնորհեն: Քու էութեանդ սուրբ յարգը և անկեղծ մայրական գուրգուրանքը, հիմա նոր կը ճանչնամ: Շատ ուշ հասկցայ, բայց կեանքիս բոլոր օրերուն մէջ չեմ կրնար մոռնալ և պիտի չմոռնամ յաիտեան»⁹¹:

Այսպիսով, ուղիղ անդրադարձ ցեղասպանության, գաղթի տարիներին ամսագրի համարներում ավելի քիչ ենք հանդիպում:

Կարևոր դեպքեր, տարեթվեր, տոներ, միջոցառումներ

Ջբելի որբանոցում աշակերտները հայոց պատմության, լեզվի, գրականության մասին հողվածները գրում էին մեծ ոգևորությամբ՝ միաժամանակ չանտեսելով նաև համաշխարհային պատմության կարևոր իրադարձությունները: Նրանք հողվածներով անդրադարձել են նաև Ղրիմի պատերազմին, փորձել գնահատականներ տալ Ֆրանսիական հեղափոխությանը: Աշակերտները ծանոթ են եղել Վուդրո Վիլսոնի գործունեությանը, նրա ունեցած դերակատարությանը Հայկական հարցի լուծման գործում, Վիլսոնի դիմանկարի տակ մեջբերել են նրա խոսքերը. «Ու այս թո՛հ ու բո՛հէն շքեղ ու չքնաղ աշխարհ մի պիտի վերածեր և ամբողջ փոքր ու ճնշեալ ազգեր

88 Նույն տեղում, 17:

89 Ա. Աֆարեան, «Իմ կենսագրականը», *Տոն*, սեպտեմբեր 1924, թիվ 25, 31:

90 Նույն տեղում:

91 Ա. Կանիմեան, «Մօրս յիշատակին», *Տոն*, հուլիս, 1923, թիվ 11, 7:

պիտի թոթափեն զիրենք պատանդող շղթաները և պիտի ունենան իրենց ազատ հայրենիքը»⁹²:

1924 թ. հուլիսի համարում հողվածները հիմնականում անդրադառնում են համաշխարհային պատմությանը:

Պետք է նկատել, որ ամսագրի հեղինակները քաջատեղյակ էին ԱՄՆ հուլիսի 4-ի անկախության տոնին, որի առիթով էլ գրել են “The Greatest Day of a Great Nation” և “July Fourth” հողվածները: Ամսագրի հեղինակները չեն «նեղացրել» Լիբանանում մանդատը հաստատած ֆրանսիական կողմին և նույն համարում զետեղվել են նաև Միբիայում ֆրանսիական կոմիսար Վեյգանի նկարը, ֆրանսերենով գրված “La Syrie Nouvelle,” “La France” հողվածները: «Երկու մեծ տոները»⁹³ հողվածում նշվում է, որ հուլիս ամսին աշխարհը տոնում է երկու մեծ տոներ՝ ասպետական Ֆրանսիայի և Միացյալ Նահանգների անկախության տոները: Իրենք նույնպես այդ կապակցությամբ որբանցում միջոցառումներ են կազմակերպել⁹⁴: Ֆրանսիական հեղափոխության թեմաներով է գրված Յ. Մեղրունու «Մեծ Յեղափոխությունը և Մենք» հողվածը⁹⁵:

Լավատեսական մտքերով, ցանկություններով ու մաղթանքներով հարուստ են ամսագրի ամանորյա համարները: Նոր հույսերով, շնորհավորանքներով լի է 1923 թ. տարեմուտի համարը, երբ նշում են, որ Եղեռնի օրերը սկսել են թեղվել, նկատվում է «ապագայի տարտամ ճակատագիրն ու ազատության ջահակիրը»⁹⁶: Հեղինակը հիշատակել է նաև այն մարդկանց, ովքեր նահատակվել են՝ միաժամանակ հույս հայտնելով. «Թող այսուհետև տամուկ աչքերին ցափ դառն արտասուքի շիթերը սրբուին, թո՛ղ ուրախութեան և ցնծութեան երգերը արձանագրին»⁹⁷:

«Կաղանդ Պապուկը», «Յիսուս Մանուկը» բանաստեղծությունները, «Կաղանդ պապա», «Ծնունդի իրիկուն մը», «Հուրրա, Կաղանդ Պապա» պատմվածքներն ամանորյա տրամադրություն են հաղորդում համարին:

Համարի վերջում ամսագրի գծանկարիչը պատկերել է Փողահարին՝ «Տուն» ամսագրի տեսքով, ով ավետիս է տալիս ու վերածննդի կոչ է անում: Ծնորհավորանքներն ուղղված են ամսագրի բոլոր հողվածագիրներին, տպագրիչներին, ընդօրինակողներին, լուսանկարիչներին, կազմարարներին, վարժապետներին, հայրիկներին, մայրիկներին, բժիշկներին, արհեստավորներին, և բոլոր-բոլորին⁹⁸:

Հաջորդ՝ արդեն դեպի 1924 թ. տարեմուտին, որբերը կրկին հիշում են անցյալը և նայելով ապագային՝ գրում.

92 «Վ. Վիլսոն», *Տն՛ն*, մայիս 1924, թիվ 21, 2:

93 Հ. Մաճանեան, «Երկու մեծ տոները», *Տն՛ն*, հուլիս 1924, թիվ 23, 44-45:


94 Յ. Մեղրունու «Մեծ Յեղափոխությունը և Մենք», *Տն՛ն*, հուլիս 1924, թիվ 23, 50:

95 Նույն տեղում:

96 Մինաս Սանթրոբեան, «Նոր Տարի», *Տն՛ն*, հունվար 1923, թիվ 5, 5:

97 Նույն տեղում:

98 «Փողահարը», *Տն՛ն*, հունվար 1923, թիվ 5, 20:



Գծանկար. «Փողահարը» գծանկարը

«Անցուցած ենք վիշտ ու ցաուվ
Մեր կացութեան անէծք տալով,
Բաւ է, որքան մենք սգացինք,
Կարմրի փոխան սև կապեցինք:
Թող քո գրիչն քիչ մ'ալ երգէ,
Ուրախութիւնն որ շատ պէտք է,
Մեզ պէս ազգի մը չարչարեալ
Հաւատ պէտք է և ոչ թէ լալ⁹⁹»:

Որբերին համախմբող, միասնական գաղափարի համար պայքարի ձևերից էին որբանոցի տարեվերջյան դաշտահանդեսները: Այն իրական հանդիսություն էր որբերի համար: Այդ մասին նրանք շատ ոգևորված հոդվածներ են գրում, ներկայացնում տարբեր մրցաշարերում առաջին տեղերը զբաղեցրած աշակերտների անուն, ազգանունները: Միջոցառումներին ներկա էին լինում կարևոր հյուրեր: Նշենք, որ 1924 թ. հոկտեմբերի 25-ի որբանոցի դաշտահանդեսին մասնակցել է Կիլիկիո վեհափառ Սահակ կաթողիկոսը, օտարերկրյա և հայ շրջանակներից ներկայացուցիչներ՝ Նպաստամատույցի ղեկավար կազմը, Բեյրութի Սուրբ Նշան վանքի հոգևոր հովիվը, Բեյրութի վրանաքաղաքի հովիվ Տեր Խաթ ծայրագույն վարդապետ Աջապահյանը: Հոդվածի վերջում ներկայացված են ցանկերը 800 և 100 մետր վազքում ա, բ, գ աստիճանակարգերում հաղթողների անուն, ազգանունները¹⁰⁰:

99 Հ. Տ. Յակոբեան, «Նոր Տարին», *Տոն*, հունվար-փետրվար 1924, թիվ 17-18, 20:

100 «Որբանոցին Տարեմուտի դաշտահանդեսը», *Տոն*, հոկտ.-նոյեմ.-դեկտ. 1924, թիվ 26-27-28, 58-59:

Որբանոցում մշտապես լինում էին գրական-երաժշտական հանդեսներ: Հունիսի 25-ին տեղի ունեցած հանդեսը, որին նույն օրն անդրադարձել է «Փինիկ»-ը, անցել է տոնական զարդարված սրահում, որտեղ փակցված են եղել Վարուժանի, Ակնունու, Զարդարյանի, Միամանթոյի, Անդրանիկի նկարները, ազգային տրամադրություններ են եղել և միջոցառման ավարտին հանձնվել են ավարտական վկայականները և հնչել են ոգևորիչ կոչեր. «Կեցցե՛ մանուկ Հայաստանը և անոր վերջին Խլեակները»: Միջոցառումն ավարտվել է Ջունեյիի որբանոցի հոգևոր հովիվ Գարեգին քահանա Պողարյանի աղոթքով¹⁰¹:

Ամսագրում հանդիպում ենք հողվածների, որտեղ գնահատականի խոսքեր կան միսիոներների հայասիրական գործունեության վերաբերյալ: Անդրադարձ կա դանիացի միսիոներ Միս Պիտերսենին՝ որպես հայասեր և հայախոս միսիոներուհու, ով 22 տարի հայ ժողովրդին արհավիրքի օրերին ծառայություն է մատուցել և ականատես եղել հայ ժողովրդի դեմ գործած անպատում խժոժություններին¹⁰²: Ամսագրի հաջորդ էջին դանիացի հայախոս օրհորդ Մարիա Յակոբսենի դիմանկարն է: Նա երկար տարիներ եղել է հայաշատ կենտրոններում, ծառայել հայ ժողովրդին և որբերի կողմից արժանացել «Մայրիկ» կոչմանը¹⁰³:

Ամսագրի 1924 թ. մարտի համարում անդրադարձ կա որբանոցի տնօրեն Ռեյ Թրևիսի գործունեությանը: Նրա դիմանկարի տակ կարդում ենք, որ նա հինգ տարի եղել է որբանոցի տնօրենը և այդ ընթացքում որբերի նկատմամբ ցուցաբերել է ծնողական գործվանք ու գուրգուրանք, որի պատճառով «Պապա» է կոչվել¹⁰⁴:

Խոսք ուղղելով տնօրենին՝ Սարգիս Փիլիկյանը գրում է. «Ըսէ՛, ինչպէս իմացար որ անգութ ձեռքերու կոշտ խնամքին տակ կան ծնողագուրկ անթիւ որբուկներ՝ մահուան սարսուռը սրտերուն... դու եկար ի լուր քարսիրտ աշխարհի հաղորդելու մարդկային անգթութիւնները, որ օր ցերեկին արեան բաղնիքներ կը սարքէ և արիւններ կը շատորուանացնէ մեր հայրենի ջինջ երկնքի տակ:

Գու հաւատարիմ սուրբ կոչումիդ ... ծնողավայել գուրգուրանքովդ ու սիրովդ անսահման մեր աղաղակները կը գրաւես դէպի քեզ, որոնք այս սրահիս չորս պատերէն կարձագանգեն, հայրիկ...»¹⁰⁵:

«Անկիւնաքարը» պատումում հեղինակ Գառնիկ Բանյանսն¹⁰⁶ անդրադարձել է որբանոցի տնօրեն Թրևիսի մարդկային արժանիքներին ու նրա վերաբերմունքին հայ որբերի ու որբանոցային խնդիրները լուծելու համար: Իրեն բնորոշ հարուստ

101 Արմէն Յակոբեան, «Որբանոցիս ամսավերջի հանդեսը», *Տն՛ւ*, հունիս 1924, թիվ 22, 37-38:

102 Միս Բիթիրսըն. դիմանկար և կից գրութիւն, *Տն՛ւ*, օգոստոս 1924, թիվ 24, 1:

103 Միս Ճէքքլպարն. դիմանկար և կից գրութիւն, *Տն՛ւ*, օգոստոս 1924, թիվ 24, էջ 2:

104 Մըստըր Բեյ Թրէվիս. դիմանկար և կից գրութիւն, *Տն՛ւ*, մարտ 1924, թիվ 19, 3:

105 Սարգիս Փիլիկեան, “Mr. Travis,” *Տն՛ւ*, մարտ 1924, թիվ 14, 3:

106 Գառնիկ Բանյանը ծնվել է Կյուրիքն քաղաքում 1910 թ.: Յեղասպանության տարիներին տարագրվել է սիրիական անապատներ: Կարճ ժամանակահատված մնացել է Համայի որբանոցում, հետո տեղափոխվել է Անթուրա, այնուհետև՝ 1918 թ. Ջբելիի որբանոց: Ունի տպագրված հուշագրություններ: «Յուշեր մանկութեան եւ որբութեան» հուշագրությունը Անթուրայի որբանոցի մասին է: «Տուն» ամսագրի հողվածներում զգացվում է Գառնիկ Բանյանի գրելու տաղանդն ու հարուստ բառապաշարը:

և պատկերավոր լեզվով նա պատմում է, թե ինչպես է Թրևիսը բոլոր որբերի հետ հորդ անձրևի տակ մասնակցել որբանոցի շինությանը վնասող ջրի հունը փոխելու աշխատանքներին: Եվ այդ առնչությամբ Գառնիկ Բանյանը գրում է. «... մտքով բոլոր հեռու և մտռիկ ամերիկացիներու հետ եմ, անոնց՝ որոնք քաջալեր կը հանդիսանան մեզի, որոնք ջանք թափեն որպէսզի մենք մեծանանք ոչ միայն մարմնապէս, այլ հոգեպէս: Սէր և երախտագիտութիւն մեր բոլոր բարերարներուն»¹⁰⁷:

Թրևիսի մասին *Յուշամատեն*ում կարդում ենք, որ նրա նկատմամբ ամերիկյան դեկավարության բացասական վերաբերմունքի պատճառն իր հայակենտրոն դիրքորոշումն էր, մանավանդ այն փաստից հետո, երբ նա Թալեաթ փաշայի սպանության լուրը որբանոց հասնելու օրը թույլատրել է մեծ հայրենասիրական երթ անցկացնել որբանոցում: Նա անձամբ է հայկական եռագույնը բռնած առաջնորդել որբերին, ովքեր ժամեր շարունակ ազգային-հայրենասիրական երգերով պտույտներ են կատարել որբանոցի շուրջը¹⁰⁸: Նրան երբեմն բնորոշում են որպէս հայացած ամերիկացի:

Որբանոցում կազմակերպված միջոցառումներից է եղել նաև դեկտեմբերի 7-ի Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպության նախաձեռնած «Ոսկեդէն կանոն»-ի ճաշկերույթը¹⁰⁹: Վերջինիս հոգևոր խորհրդի մասին կարդում ենք. «Ճաշասեղանին մասնակցող իւրաքանչիւր հիւր, տղոց հետ կողք կողքի նստած ճաշեց և պահ մը ապրեցաւ այդ ճաշին խորհուրդը, որուն կենդանի օրինակն է նոյն ինքը որբը»¹¹⁰: Միջոցառման շրջանակներում որբանոցի նվազախումբը մի քանի ազգային երգեր է նվագել, հյուրերը ճաշից հետո կամավոր նվերներ են հանձնել: Ամսագրում կարդում ենք, որ մոտավորապէս 110 սիրիական ոսկի է հավաքվել¹¹¹:

Գնահատականներ, կարծիքներ ամսագրի մասին

Իրենց կատարած գործի մասին իրական գնահատական են տվել հենց իրենք՝ խմբագրական մարմնի անդամները. «Տունը իր անցած շրջանին մէջ ընթերցատէր

107 Գառնիկ Բանեան, «Անկիւնաքարը», *Տուն*, հունվ.-մայիս 1925, թիվ 29-33, 8-9:

108 *Յուշամատեն*, 142:

109 «Ոսկի կանոնի» կիրակի կազմակերպելու գաղափարը եղել է Ամերիկյան նպաստամատույցի հոգաբարձուների խորհրդի անդամ Չարլզ Վիքրիինը: Այն շատ կարճ ժամանակում դարձել է Ամերիկյան նպաստամատույցի ամենաարդյունավետ նախաձեռնություններից մեկը: Ոսկի կանոնի կիրակին հիմնականում կազմակերպվում էր ճաշկերույթի ձևաչափով, երբ աշխարհի տարբեր քաղաքների լավագույն հյուրանոցների ամենամեծ ընդունելությունների սրահներում հայտնի մարդիկ օգտվում էին որբանոցներում ընդունված ճաշացուցակներից և այդ ընթացքում խրախուսվում էր հանգանակությունների ու մարդասիրական նմանատիպ միջոցառումների մասնակցությունը: Որոշ դեպքերում էլ եկեղեցիների, վարժարանների բակերում տարբեր հանգանակություններ էին կազմակերպվում, որի ողջ հատույթը փոխանցվում էր Նպաստամատույց կազմակերպության հոգածության տակ գտնվող որբանոցներին: St' u Ch. V. Vickrey, "Golden Rule Sunday: Earthquakes and Orphans in Armenia; A Thanksgiving Season in America," *The American Review of Reviews* 74 (1926): 590-592:

110 «Ոսկեդէն կանոնի ճաշը որբանոցիս մէջ», *Տուն*, հոկտ.-նոյեմ.-դեկտ. 1924, թիվ 26-27-28, 61-62:

111 Նոյն տեղում, 62:

որբերու, սիրալիք ընդունելության և հայ մամուլի անկեղծ ու բազմօգուտ քաջալերության արժանացած ըլլալով, աշխատած է ճշմարիտ թարգմանը ըլլալ մեր սրտի հատորներու իրական ապրումներուն և յոյսերուն: Տուն-ը աշխատած է պարզ հայելի մը ըլլալ, որուն մէջ որոշապէս կը տեսնուի մեր այս ապրող նոր սերունդին երագները՝ հանդէպ մեր հայրենական տունին: Մենք աշխատած ենք մեր թուղթէ Տուն-ին մէջ տեսնել ու գտնել մեր հայրենի բոյնը, որուն երդիքին տակ միայն կրնանք գտնել ապաստան: Տունը իր անցած շրջանում փորձել է բացահայտել նորաթուխ բանաստեղծների ու գրագետների...

Տունը աշխատած է ըլլալ միակ արտայայտիչը մեր որբերու այն խոր հիացման և երախտագիտութեան՝ հանդէպ այն մեծ ճարտարապետներուն, որոնք «Տուն»-ի մը կառուցման, յատակագծի պատրաստութեան կամ հիմնաքարերը դնելու հսկայ և սրբազան գործին մէջ նահատակուել են: Թեպէտ այսօր այդ մեծ ճարտարապետները չկան, թեպէտ տունը կիսատ է մնացած, բայց մենք մեր Տունով կ'ուզենք երաշխատրել որ մենք պիտի սկսինք այն լինութեան մեծ գործը և պիտի ջանանք լմնցնել զայն, որ սկսան մեր նախորդները, բայց չկրցան լրացնել:

Երանի թէ շրթայապիրի դռները փշրուին, խափանարար թումբերը պատռուին, և մեր հայրենիքը ազատ կաշկանդումներէն ու գուլումներէն կրկին վերածնի, կրկին վերածաղկի և կրկին հոն թևածէ մեր քաջատողջ գաղափարը: Այն ատեն Տուն-ը իր իսկ տան մէջ, իր իսկ հողին վրայ պիտի սկսէր լոյս տեսնել...»¹¹²:

Հ. Իտիդյանը գրում է, որ իրենք անթերի ու կատարյալ լինելու խնդիր չունեն և ամսագիրը գրվել է որբերի ուրույն բարբառով և հարազատ զգացումներով. «Մենք մեր կարելին պիտի ընենք որ այս շրջանին զայն ատելի խնամուած ու ատելի ճոխ ընելու և քաջալերուած մեր գտած ջերմ ընդունելութենէն, փոխնակ 40-50 օրինակի, 100 օրինակ պիտի հրատարակենք իւրաքանչիւր ամիս»¹¹³:

«Տուն»-ի երկրորդ տարելիցի առթիվ գրում են, որ նոր գաղափարներով ու քաջալերություններով են սկսում, քանի որ և՛ ընթերցողները, և՛ բարեկամները գրավոր և բանավոր սատարում են իրենց գործունեությանը և արձանագրում. «Տուն-ը դարձած է անխտիր բոլորին սեփականութիւնը, որուն հանդէպ ամէն տղայ պաշտամունք ունի»¹¹⁴:

Վահան Արծրունին գնահատում է ամսագրի անցած ճանապարհն ու ոլորտում գրանցած առաջադիմությունը: Նա հետաքրքիր համեմատություններ է անում՝ նշելով, որ նյութական տներից վեր կան մարդկային խոր թաքստոցներ, հոգևոր բնակարաններ, որ մի անգամ համոզվածությամբ և իրավունքի կատարյալ գիտակցությամբ մտնողները, անկարելի է, որ դուրս գան: Նա երեխաներին դիմում է *տնագործի թռչնիկներ* անվանումով և կոչ անում աշխատել հարաճուն ու անհոգնաբեկ կյանքով՝ որպէսզի նրանց թղթէ տունը մի օր վերածվի իրական հայ տների, հոյակապ պալատների, և քսաներորդ դարի սերունդը երգի իր հաղթանակները:

112 Յ. Իտիդյան, «Մեր նպատակը», *Տուն*, սեպտեմբեր 1924, թիվ 25, 6-7:

113 Նույն տեղում:

114 Հ. Մաճառեան, ««Տուն»-ի երկրորդ Տարելիցին առթիւ», *Տուն*, սեպտեմբեր 1924, թիվ 25, 11:

Վահան Արծրունին ճշմարտացիորեն նկատում է. «Ձեր պարբերականից ավելի թախիծ և մեղամաղձոտություն կը բուրե: Իրաւ, դուք ողբերու, վշտի մէջ եք մեծացել, որոնք ուժգին տպավորութիւններ են գործել ձեր մատաղ հոգիներու վրայ, բայց պետք է արհամարհել տառապանքի ապարդյուն կսկիծները և դէմքը դարձնել դէպի գվարթութեան ծաղկաւէտ ուղին»¹¹⁵:

Հաջորդ խորհուրդը, որ նա տալիս է որբանոցի սաներին, նույնպէս կարևոր էր և մանկավարժորեն ճիշտ. «Շատ գրելու ճիգ մի ընէք երբեք, լաւ է քիչ և սիրելի քան թե շատ և տաղտկալի կամ ծիծաղելի ըլլալ, իսկ գրելէ առաջ երկար կարդացէք, զի ընթերցանութիւնը այն միակ միջոցն է որով դուք պիտի գարգանաք»¹¹⁶:

Խոսելով իրենց գործունեության մասին՝ որբերը մշտապէս նշում են, որ հայ տղաները միայն քարից ու հողից տուն շինելով չեն բավարարվում. «Հայ գաւակները ... կը սիրեն ստեղծել Տուն մը մտքի զգացումի, հայրենիքի կարօտի, գաղափարի որուն մէջ իրենց իղձերը, փափաքները, երագները վսեմօրէն կարենան հիւսել: Այո, այդ պիտի ըլլայ մեր երախտագիտութեան խօսքը, որ մենք կարողացել ենք կատարել պարտքը դէպի Ազգը, Հայրենիքը ու մարդկության նկատմամբ»¹¹⁷:

Այսպիսով, որբանոցը, հայրենի տունն ու Տուն-ը կարծես միաձուլված էին որբերի համար, այն ապահով միջավայր էր, չնայած «Յուշատետր» բաժնում 1925 թ. փետրվարի 15-ին թվագրված տողում կարդում ենք. «Մեր տունը պիտի պարպուի, տղաներու կէտը Սայտա և միւս կէտը Անթիլիաս պիտի երթան»¹¹⁸: Արդեն ապրիլի 7-ին Թրևիսը մեկնում է Ամերիկա, իսկ նրան փոխարինում է Չարլզ Ֆատուր:

Ամսագրի գործունեության վերջին շրջանը

Հարկ է նշել, որ վերջին համարներում նկատելի է Նպաստամատույց կազմակերպության գործունեության ներկայացումը, որտեղ վերջինիս մեծաբելու երանգներն ավելի խտացված են:

Միհրան Ղազարյանի «Ճերմակ աստղին» հոդվածում կարծես ամփոփվում ու գնահատվում է Նպաստամատույցի գործունեությունը: Հեղինակը վեց տարի մտքով հետ է գնում՝ 1919 թ., երբ երկիրն ամբողջովին ավերված, քանդված, թալանված էր, հայ ժողովրդի նյութական, բարոյական ու ֆիզիկական կյանքը վտանգված՝ ամպամած գիշերվա մէջ, երբ հայտնվում է փրկության հանգրվանը: Այնուհետև փոքր ինչ վերամբարձ ոճով հեղինակն անդրադառնում է այն անհատներին, ովքեր լքել են իրենց հայրենիքը, դարձել մարդասիրության և Քրիստոսի գաղափարների առաքյալները: Նրանք որևէ բան չխնայեցին որբերի հանգստության համար, չզլացան օգնել որբերին և որպէս երախտապարտություն «Հայրիկ» կամ «Մայրիկ» կոչվեցին¹¹⁹:

115 Վահան Արծրունի, «Տուն-ի բնակիչներուն», *Տուն*, սեպտեմբեր 1924, թիվ 25, 36-37:

116 Նույն տեղում, 37:

117 Նույն տեղում, 10-11:

118 «Յուշատետր», *Տուն*, հունվ.-մայիս 1925, թիվ 29-33, 35:

119 Միհրան Ղազարեան, «Ճերմակ աստղին», *Տուն*, հունիս 1925, թիվ 34, 5-8:

Հունիսի 27-ին տեղի է ունեցել վերջին դաշտահանդեսը, որն ընթացել է իր բնականոն հունով՝ հնչել են արաբերեն, ֆրանսերեն, անգլերեն բանաստեղծություններ նվազախմբի և երգչախմբի մասնակցությամբ: Միջոցառման վերջում խոսել է նորանշանակ տնօրեն Չարլզ Ֆաուլը, որը գնահատում է արված աշխատանքը, նշում է, որ դեռ երկու տարի առաջ Սիրիայում տասը հազար որբ կար, հիմա այդ թիվը չորս հազարի է իջել և հույս է հայտնում, որ ավելի պիտի իջնի: Նա եզրափակում է իր խոսքը. «Մեր նպատակն է, որ դուք ամեն կերպով զարգանաք»¹²⁰: Ֆաուլը որոշ ծրագրեր է որբերին ներկայացրել ամառային պատրաստվածություն անցնելու, առաջիկա տարում ավելի հաջողելու համար, նշել, որ օրվա մի կեսը պետք է տրամադրել դասապատրաստումների, մյուս կեսն էլ՝ զբոսանքներին, որոնք պետք է նախաձեռնենին Հովհաննես Շահինյանն ու որպես ուսուցիչ նրան օգնելու եկած Լևոն Աբգարյանը: Ֆաուլը կարևորել է արաբերեն լեզվի իմացությանը՝ որպես հյուրընկալ երկրի լեզու¹²¹:

Բայց ծրագրերը կիսատ են մնացել, ու 1925 թ. որբանոցը ցրվել է¹²²: Մինչ այդ, նշենք, որ իր որբանոցային ցանցի սաների համար Նպաստամատույցը ստեղծել էր համընդհանուր մի կառույց՝ որոշակի ձևերով նրանց համախմբելու ու որոշակի վերահսկողություն ունենալու համար:

Ամսագիրն անդրադառնում է այդ կառույցին՝ Լիզային՝ նշելով, որ Լիզան Նպաստամատույցի որբանոցներում գտնվող տղաների ու աղջիկների եղբայրակցությունն է: Նրա նպատակն էր, որ այդ երիտասարդները գիտակցեին կյանքի իրական արժեքը: Լիզայի կանոններն ամբողջությամբ ներկայացված են ամսագրի էջերում¹²³: Այսպիսով, որբանոցը դադարում է գործել, փակվում է ընթերցասարահ-գրադարանը, լուծարվում է Գրական ակումբը, և չի հրատարակվում «Տուն» ամսագիրը: Իսկապես,

120 Ս. Մ. Սարգիսեան, «Որբանոցի ամենավերջին հանդեսը», *Տուն*, հունիս 1925, թիվ 34, 22-23:

121 Նույն տեղում, էջ 24:

122 Նշենք, որ որբանոցը չփակելու նամակ-խնդրանքներով Չարլզ Ֆաուլին են դիմել Կիլիկիո Կաթողիկոսը, Պատրիարքական փոխանորդը, «Փրինիկ» խմբագրատան ղեկավարությունը, Կարմիր Խաչ կազմակերպությունը, Ազգային վարժարանի տնօրինությունը, բայց այնուամենայնիվ, Ֆաուլը կարգադրել է փակել որբանոցը, մինչդեռ որբանոցի սաները որբանոցի փակելու հիմնական պատճառը համարում են տնօրենի՝ «հայ ազգային ոգիի դեմ ունեցած ատելությունը»: Տե՛ս *Յուշամասնեսն*, 307-313: Նշված ժամանակահատվածում Ամերիկյան նպաստամատույց կազմակերպությունը նպատակ ուներ միավորել իր հոգածության տակ գտնվող որոշ որբանոցներ: 1925 թ. որբերի թիվը նվազել էր՝ հասնելով 1000-ի, որոնցից 600-ը տեղափոխվել են Սայդայի, 200-ը՝ Նազարեթի և Անթիլիասի որբանոցներ, իսկ 200-ը չափահաս էին ու ազատ էին տեղաշարժման հարցում:

123 1. Գործով և խոսքով պարկեշտ լինել,

2. Մարմինս՝ կյանքի պայքարի համար առողջ,

3. Հնարավորությանս սահմաններում պետք է պատրաստ լինեմ ուրիշներին նույնպես դեպի առողջ ու մաքուր կյանք առաջնորդելու:

4. Գործի և խաղի մեջ պիտի զվարթ լինեմ, պարտության մեջ՝ ուրախ, որովհետև գործերս ճշմարտապես կատարել եմ, և հաղթության մեջ վեհանձն:

5. Պիտի հարգեմ այն երկրի օրենքները, որտեղ որ ապրեմ:

6. Իբրև Նիր Իսթի լիզայի անդամ նրա կողմից առաջարկած պարտականություններիս սիրահոժար պիտի մասնակցեմ: Իբրև անհատ շուրջս գտնվողներին պիտի ծառայեմ՝ առանց մոռանալու, որ «մարդու կյանքի ամենալավ մասը նրա փոքր, չհիշված, քաղցրության և սիրո գործերն են» և «ավելի առատ կյանք» ապրելու համար պիտի աշխատեմ: Տե՛ս *Տուն*, հունվ.-մայիս 1925, թիվ 29-33, 27:

այստեղ հավաքված որբերը և նրանց ուսուցիչները կարողացել էին ստեղծել իրենց ամուր *Տունը*, որի արդյունքում որբանոցային այդ սերունդը կարողացավ սերտ համագործակցության և համատեղ աշխատանքների արդյունքում ստեղծել իրենց որբանոցի «Յուշամատեան»-ը, որպիսին ոչ մի որբանոց չի ունեցել: 1925 թ. «Յուսաբեր»-ի համարում անդրադարձ է կատարվում որբանոցի փակման լուրին, դրա պատճառներին ու հետևանքներին ու դրան զուգահեռ նշվում է հետագայում թևավոր խոսքի վերածված արտահայտությունը. «Մեռած է Ճիպէլը, բայց կէցցէ՛ Ճիպէլը»:

Եզրակացություններ

Հոդվածում փորձ է արվել ամբողջացնել ամսագրի շուրջ երեք տարվա էջերում տեղ գտած որբերի երբեմն խիստ զգայական, հուզական, հայրենասիրական, շատ հաճախ նաև սթափ ու իրատեսական հիմքերի վրա գրված հոդվածները, նյութերը, որոնք վերլուծելը, տարբեր որբաշակերտ հեղինակների կարծիքների համարդրման արդյունքում ներկայացվել է որբանոցային կյանքի խճանկարը՝ իր գործող արժեհամակարգով ու առօրյայով: Հոդվածում ուսումնասիրվել են որբերի գրած և իրենց իսկ կողմից խմբագրված հոդվածները, վերլուծվել են որբերի կորցրած մանկության արձագանքն ու հետևանքները, որբանոցում ստացած գիտելիքները, հիշողությունների որոշ դրվագներ, ինչը թեկուզ մեկ որբանոցի մակարդակով հնարավորություն է տվել վերհանել որոշ խնդիրներ և համապատասխանաբար ներկայացնել դրանց ժամանակին տրված լուծումները:

Որբերի շարադրած նյութերից, տվյալ համարի բովանդակությունից դուրս ենք բերել որբանոցի նաև հոգևոր անցուդարձը, հայկական վերակերտումի նրանց փորձերը և գնահատել այդ հարցում ամսագրի նախաձեռնողների հաջողած լինելու կամ չլինելու փաստերը և, պարզել ենք, որ ամսագիրն ամբողջությամբ չէր արտացոլում որբանոցի առօրյան, ներքին խնդիրներին, անգամ, երբեմն ընտրողական սկզբունքով էր ներկայացնում վերջիններս: Այս հարցում իրականության մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար օգնության են գալիս որբերի հուշագրությունները:

Անշուշտ, մեկ հոդվածի շրջանակում հնարավոր չէր ամբողջությամբ ներկայացնել «Տուն» ամսագրի նյութերի ուսումնասիրությունը, որոնք կարող են առանձին ուսումնասիրվել հոգեբանության, սոցիոլոգիայի, ազգագրության և շատ այլ տեսանկյուններից: Այստեղ խնդիր էր դրվել պարզել որբանոցի գործունեության հայակենտրոն ուղղվածությունը, չնայած այս թեմատիկայով նույնպես բազմաթիվ նյութերի հնարավոր չեղավ անդրադառնալ:

Աշակերտական ամսագրում գերակշռող են հայկական ինքնության գաղափարներ պարունակող նյութերը, սակավաթիվ կենցաղային դրվագները, որոնք հիմնականում ներկայացված են ավելի թեթև՝ «Չուարճալիք» բաժնում: Ամսագրի 34 համարները կարծես ամբողջացնում են որբերի առօրյան, նրանց մտածելակերպն ու հոգեկերտվածքը: Այն իսկապես ազգային վերակերտման կարևոր փորձ էր որբանոցի սաների համար, և պետք է արձանագրել, որ ամսաթերթը՝ որպես իրենց սերնդակիցների կողմից շարադրված նյութերի ժողովածու, անգամ կարող էր դառնալ

դասագիրք այլ որբանոցներում ընթերցվելու համար: Պետք է նշել, որ ամսաթերթում ներկայացված է հայոց պատմության, քրիստոնեության ընդունման, նրա տարածման կարևոր դերակատարների մասին: Այն հայոց լեզվի ու գրականության հիմնալի հանրագիտակ էր: Հոդվածների բովանդակությունից ու ուղղվածությունից ակնհայտ է, որ հեղինակները պատանիներ են, որոնք, ինչքան էլ փորձեն ուժեղ ներկայանալ, ամեն դեպքում, դեռ Յեղասպանության հիշողության տրավման հաղթահարելու փուլում են: Կարող ենք եզրակացնել, որ որբերի մի մասը անգիտակցորեն խցանում են իրենց զգացմունքները, հուշերը, մյուսը՝ այս կամ այն կերպ բացահայտում են դրանք իրենց առօրյա հարաբերություններում: Աղետից փրկված անչափահասի ուղեղն ու միտքը, անկարող լինելով ընկալելու և իմաստավորելու ահավոր պատահարների շարունակականությունը, ենթագիտակցորեն խցանում է զգացումները, ու հարմարվում ծանր հոգեվիճակին¹²⁴: Որբանոցի սաները փորձում են Յեղասպանության հետևանքները հաղթահարել ապրիլի 24-ի հիշատակի արարողությունների ոգեկոչման, բանահյուսության, ստեղծագործելու, ընթերցելու, ասմունքելու, կրոնի, եկեղեցու, հավատի միջոցով, ինչպես նաև մշակութային, սկաուտական, տարբեր հավաքույթների, անգամ՝ զվարճալի պատմությունների միջոցով¹²⁵, ինչն ակնհայտ է «Տուն» ամսագրի բովանդակությունից:

Եթե փորձենք ամբողջացնել ամսագրում առկա նյութերը, կարևոր անձանց ու դեպքերին վերաբերող անդրադարձները, ապա պետք է փաստել. այն բավական բարձր է պահել իր տեղեկատվական նշանոցը, հայրենասիրական ու հայապահպան ուղղվածությունը: Որբանոցային ամսագիրն իր որակի մեջ անմրցելի էր նաև գծանկարներով. գրեթե հարյուր դիմապատկերներ, որբանոցի շինություններ, հատակագծեր, իրենց առօրյան արտացոլող տեսարաններ, որոնք պատկերացում են տալիս որբանոցում տիրող ընդհանուր մթնոլորտի մասին:

Բնականաբար ամսագիրը որբանոցային որոշ դրվագների չի անդրադարձել՝ կապված որոշ ուսուցիչների ու աշակերտների որբանոցը լքելու կամ ներքին որոշ անախորժ դեպքերի հետ, որն ինչ-որ տեղ օրինաչափ է: Թեև որբանոցը գործել է Նպաստամատույց կազմակերպության ֆինանսական աջակցությամբ, այնուամենայնիվ որբանոցը պահել է իր հայկականությունը և աշակերտական ամսագիրն իր գործունեության ընթացքում կարողացել է որբերին հաջողությամբ ներկայացնել հայկական ոգով գրված բազմաթիվ նյութեր:

124 Մելինե Գարագաշեան, *Յեղասպանության հոգեցնցումն*, 72:

125 Նույն տեղում, 91-92:

**TUN PUPILS' MAGAZINE OF JBEIL ORPHANAGE:
AN ATTEMPT OF NATIONAL RECONSTRUCTION**

SUMMARY

Key words: Armenian Genocide, Lebanon, orphans, national conscience, the orphanage of Jbeil, pupils' magazine, orphanage press, education, national reconstruction.

The three-year issues of *Tun* [Home] pupils' magazine of the Near East Relief's Jbeil (Lebanon) orphanage have been researched and analyzed in this paper. The article has studied the papers written by orphans sometimes based on emotions, patriotism, and sometimes on realistic approaches. By analyzing and summarizing the papers this article aims at better understanding the nationalistic atmosphere in the orphanage, the feelings of the children and the steps undertaken to overcome the consequences and hardships of the Genocide.

Summarizing the content of the papers published in 34 issues of the journal, the article concludes that *Tun* with its articles on literature and national feelings, pieces of evidence about homeland and the years of Genocide had a special meaning for the orphans. Through the articles the orphans of Jbeil made unique attempt of national reconstruction, which contributed to their efforts to overcome the trauma of Genocide. Among the papers were articles about the events of April 24 and dedicated to the memory of martyrs, articles on the Armenian language, literature and folklore, and the Armenian spiritual values sharing them with the younger generation through reading and reciting.

Нарине В. Маргарян
кандидат исторических наук

**ЖУРНАЛ «ТУН» ВОСПИТАННИКОВ СИРОТСКОГО ПРИЮТА
ДЖЕБЕЙЛА: ПОПЫТКА НАЦИОНАЛЬНОГО ОБНОВЛЕНИЯ**

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Ливан, сироты, национальное самосознание, сиротский приют в Джебейле, ученический журнал, сиротская пресса, образование, национальное обновление.

В статье изучены и проанализированы выпуски за три года ученического журнала «Тун» (Дом) воспитанников сиротского приюта Американского комитета помощи

на Ближнем Востоке в Джебейле (Ливан). В частности, были рассмотрены работы, написанные сиротами, которые основаны иногда на эмоциях и патриотизме, а иногда на реалистичных подходах, также произведен их анализ и обобщение для лучшего понимания атмосферы в детском доме, чувств детей и шагов, предпринятых для преодоления последствий Геноцида.

Суммировав содержание статей 34-х выпусков журнала, можно прийти к заключению, что журнал сиротского приюта со своими богатыми национальными, литературно-художественными статьями, воспоминаниями о родных местах и свидетельствами о годах Геноцида, наделен специфической для 13-16-летних сирот глубиной.

Поколение воспитанников сиротского приюта в Джебейле пыталось достичь национального обновления разными методами, которые способствовали преодолению геноцидальной травмы. Из них нужно отметить церемонии поминовения жертв Геноцида армян 24 апреля, статьи о национальных ценностях, армянском языке, литературе и фольклоре, информирование младшего поколения об армянских духовных ценностях посредством сочинительства, чтения и декламации.

REFERENCES

Տուն աշակերտական ամսագիր Ջբեյլի որբանոցի [Tun [Home] Pupil's Journal of Jbeil Orphanage]. Jbeil, Lebanon, 1922-1925 (unpublished);

Յուշամատենն Ճիպէյլի ամերիկեան որբանոցի 1920-1925 [Houshamadyan of the Jbeil American Orphanage, 1920-1925]. Beirut: Hamazgayin, 1969;

Avetisyan, Suren. *Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմի) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ.* [The Activities of the American Committee for Relief in the Near East in Armenia, 1918-1930]. Yerevan: National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of History, 2009;

Darbinyan, Asya. «Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի մարդասիրական քարոզչական քաղաքականության առանձնահատկությունները (1915-1930 թթ.)» [Peculiarities of Publicity Campaigns of Near East Relief Committee (1915-1930)]. *Patmabanasirakan handes* 2 (2011): 47-59;

«Հայ որբեր. տեղեկագիր հայ որբերի կացութեան, որբանոցներու, հոգատար մարմիններու մասին եւ վիճակագրական ցուցակներ» ձեռագիր տեղեկագիր [Armenian Orphans: Handbook on the Status of Armenian Orphans, Orphanages, Caregiving Bodies and Statistical Lists. A Handwritten Bulletin]. Paris, 1923;

Հայ որբահնամ ընկերութեան Այնթապի որբանոց, Ակնարկ մը հաստատութեան պարագաներուն եւ քառամեայ պատմութեան վրայ (1919 օգոստոսէ 1923 յունիս) [Aintab Orphanage of the Armenian Relief Society, an Overview of the Events and the Four-Year History of the Institution]. Alexandria: S. Gasporean, 1923.